

81

891. 99

U-83

190!

1/3

92

DR

15 APR 2009
19 NOV 2010

ՀԱՅՈՒԹ

891. 99

Ա-83

ԱՐԱՄԱՆԻ

ՓՈՔԻԿ ՊԱՏԿԵՐՆԵՐ

Գիրն է 20 դրամ.



ԱՐԱՄԱՆԸ. Մալենկіє ռազկազы.

Б А К У

Электропечатня С. Т. Шахбагова.
Տպարան Ա. ՇԱՀԲԱԳԵՎԻՆԻ, Բագրատ:

1913.





5362



53 62 -

ՓՈՐՄԻԿ ՊԱՏՎԵՐՆԵՐ

9054
1175




ДРАМАЛЬСЬ. Маленькие рассказы.

Б А К У

Электропечатня С. Т. Шахбагова.

Տպարան Ս. ՇԱԽԲԱԳՈՎԻ, Բակու:

1913.



21.02.2013

21428



ՆԱՀԱՏԱԿՆԵՐԻՆ

Երբ տաք գնդակը ձեր սիրտը ծակեց և խորունկ վէրքից արիւնը ցայտեց, դուք փորսող տալով՝ քարէ բարձի վրայ ձեր հանգիստն առաք:

Երբ սառն քամին լեռան կատարին՝ բուք ու բորանով ձեր կուրծքն էր ծեծում, դուք սրթսրթալով՝ ձեր մերկ մարմինը ցնցուիներով պատապարեցիք:

Երբ շրջապատուած թշնամիներով պապակւում էիք, այրւում ծարաւից, ուազմի երգերի անզուսպ ժայթքոցով՝ խեղղող ծարաւը հեռու վանեցիք:

Երբ քաղցից նուտղած, հողը փորելով՝ խոտի արմատներ էիք ծամծըլում, վառօղի ծուխը եղաւ ձեզ համար փրկիչ մանանայ:

Զեր խոր վէրքերը խնամուտ ձեռքերով՝ ոչ ոք չփաթթեց, արնով եզերուած ձեր ճակատներին մայրեր ու քոյրեր գողգոջ շրթունքով համբոյրներ չըդրին:

Գարուններ եկան, գարուններ անցան, և հեռու, հեռու սիրակէզ սրտեր, մխացող աչքեր երկար տարիներ ձեր դալուկ գէմքին կարօտ մնացին:

Այժմ էլ գարուն է. — գարնան նոր բերած թարմ ծաղիկներից՝ պսակ ձեր շիրմին:

Զեր գաւանանքին, սրբութիւն սրբոց վեհ գաղափարին, որ զրկանքների, տառապանքների ծանր օրերում հրեղէն մի սիւն եղաւ ձեզ համար՝ յարգմնք յաւիտեան:

Ոսկեղէն գրչով քանդած, քանդակած պատմութեան գրքում, պահծալի կոթնդ՝ ձեր անուններին, ձեր յիշատակին:

Եւ անհետ կորած ձեր շիրիմներին, սար ու ձորերում ցանուցիր եղած ձեր ոսկորներին, անսուշ ընկերներ, ձեր ընկերներից՝ այրող կարօտի ողջոյն ջերմագին:



1142-2009

Անցաւ մի բոպէ. ձայն չեր գալիս... Գնաց արծիւը...
վեր նայեցի:

Ո՛չ, չեր գնացել. ինձնից քիչ բարձր գեռ կանգնած
էր նախկին դիրքում, միայն աշքերն այլ ևս չէին վառւում
առաջուայ նման, այլ այնտեղ վայլում էր ինչ որ խանդա-
ղատանք.

Բարե, ընկեր—ջան,—ասաց արծիւը.—ինձ չես ճա-
նաչում:

Չը գիտեմ, զարմացմյ, որ արծիւը խօսեց, թէ սար-
սափեցի... Ընկեր... ուշադրութեամբ նայեցի ես նրան:
Եյն, արծիւ էր. միայն կրծքի վրայ փայլող կարմիր ժապա-
ւէնը ոչ թէ ժապաւէն, այլ արեան շերտ էր:

— Էլի՞ չը ճանաչեցիր.—կրկնեց արծիւը.

— Զայնդ ծանօթ է,—հազիւ մրմնջացի ես:

— Հապա մի նայիր, գուցէ ճանաչես,—և թեքուելով
ցոյց տուեց ճակատը:

Այնտեղ մի փոս կար, խոր, խաւոր մի փոս...

Կուրծքը՝ վիրաւոր, ճակատը՝ փշրուած...

— Ա՛, ճանաչեցի...—կանչեցի յուզուած, և արտասուալից
աչքերով՝ նրա փշրած ճակատն ու արնոտ կուրծքը համբու-
րեցի...—Ճանաչեցի, բայց դու... չը ո՞ր...

— Ես, այն, մեռած էի... բայց այն՝ մարմինս էր, որ
ընկաւ այնտեղ... իսկ ես՝ գաղափարն եմ, որ գնդակն ապա-
նել չը կարողացաւ. և ահա այժմ ես միշտ կենդանի, միշտ
թեաւորուած, ճախրում եմ բարձրում:

— Իսկ ուր ես գնում:

— Գնում եմ այնտեղ, ուր կրիտասարդ ամուսնու գըր-
կում համբոյր սպասող հարսը լալեցին. ուր ծծկեր մանկանց
անմեղ սրտերում վայրի հրճուանքով նիդակ շամփրեցին...
Այնտեղ, ուր կաթ-կաթ ծորաց արիւնը վիրաւոր սրտից,
որտեղ կարեկից տարմօր փոխարէն՝ գաշոյնն աղատեց մօրը
երկունքից... ուր ընկերներս ցաւից կծկուելով քարեր գըր-
կեցին և հրդեհների բոցերի միջից բողոքը մոնչաց...

Ես ամեն տարի գնում եմ այնտեղ. Ուզում ես, գնանք
միասին:

ԾԱՂԻԿԸ

ԽԵԶՈՒ ԺԻշտաւակին*)

Ես յոգնած ու հալածական կանգ առայ բլբակի գա-
գաթը կազմող կանաչազարդ հարթոցում, որտեղից չորս
կողմու տարածում էր մի յափշտակող գեղեցկութիւն. Ամա-
րային մեղմիկ զեփիւան օրօրում էր ինձ և ես անձնատուր
եղած մոայլ մտքերիս՝ պառկեցի խոտերի մէջ:

Ինքը բնութիւնը ցրեց մտքերս և ես լնկայ մի զմայ-
լելի ինքնառուացութեան մէջ: Կտրուած առօրեայ հոգսերից,
մոռացած ճնշող իրականութիւնը՝ ես հանգստանում էի ծոյլ
մեղկանքով. և էութեամբս ձուլուելով բնութեան հետ, կա-
մաց-կամաց սկսում էի հասկանալ չորս կողմս սլալացող խո-
տերի լեզուն: Նրանք երգում էին անհոգ երգեր, հէքիաթ-
ներ պատմում կախարդական աշխարհից, իսկ աշքերս յա-
ռած երկնակամարին, հաճոյքով ականջ էի դնում նրանց:

Աշխարհն այլ ևս գոյութիւն չունէր ինձ համար. վե-
րացել էի:...

Բայց ահա այնտեղ, կապոյտ երկնակամարում, ուր
հայեացքս էի յառել, երևաց մի արծիւ, վեհապանձ, թեկըը
լայն տարածած, կրակոտ աշքերը դէպի ինձ սկեռած: Վեհ
էր արծիւը, հսկայ, զօրաւոր և կուրծքը զարդարուած կար-
միք ժապաւէնով:

Ճախրեց արծիւը լոյն պտոյտներով. ապա կամացուկ
թեկըը սեղմեց, ճշաց, դէպի ցած սլացաւ, եկաւ ինձնից քիչ
բարձր կանգ առաւ, առաջուայ նման կրակոտ աշքերը դէմ-
քիս սկեռած:

Ես վախեցայ և աշխատեցի ծածկուել խոտերում:

*) Սպասնուած 1896 թ. Սեպտ. 13-ին հէմ զիւղի մօտ.

— Գնանք, —ասացի: —
Եւ մենք գնացինք:

Բարձրագույնի լեռան ստորառով գետը, վճիռ ալիք-
ներն ափերին գարկելով՝ կտրում էր թաւշապատ զաշտը;
Ափերից մէկի վրայ շարուած էին անթիւ, անհամար մոխ-
րակոյտիր, որոնց արանքից մարդկային ոսկորներ էին
դուրս ցցուած. կիսախանձ, սեացած ոսկորներ: Յնդուեցի:

— Իմ ոսկորներս են դրանք. — ասաց արծիւը. — յիշ շնում ես... զիակս կըտակն էր նետուել...

Երկու կաթիլ արտասուք թռան աչքերիցս և դէմքս աշխատով ցած իջան:

—Զէ, չէ,—ասաց արծիւը, գէմքս շոյելով.—մի լար,
այն կողմը նայիր, և թու միսիթարուի սիրտդ:

Նայեցի:
Զքնալ, կարմիր ծաղիկներ էին, Եղեմիզ բերուած,

պճնուած գրաւիչ, դիւթական պերճանքով:
—Երկնային ծաղիկներ... ի՞նչ ծաղիկներ են սրանք:

Դրանք մեր թափած արիւնից ծլած ծաղկեներն են... հապն մի հոտ քաշիր:

Պատեցայ ու հոտոտեցի մէկը:
Ի՞նչ քաղցր հօտ էր այն...

Աղասիովթեան հոտն էր բուրում։
Արծիւը վհօրէն ծաղիկներն էր դիտում, թէ չեն մե-

ծացել արդիօք, իսկ ես անյագութեամբ իմ կարօտած, իմ փսիփագած բոյըն էի հոտոտում և անմեկնելի հոտից արբեցած՝ էլ ինձ զսպել չը կարողացայ ու գոռացի ամբողջ ուժով։
—Ազատութիւն, Ազատա Ահեն...

Զայնիցս արթնացայ: Տեսածս երազ էր:
Դարձեաւ առիվնաս էի և մոտ էր:



Հայոց պատմագրութիւնը առելու մէջ կատարած մէջ բառայի խոզք խոսվում ու հերթափառ մէջնէր հրացնած բառ պարունակ մէջ հայ

ՓՃՈԾ ՀԱՆԱՊԱՐՀԻՆ

ՄԵԽՆՔ ՆԱՍԻԵԼ ԷՒԻՆՔ ՍԱՎԱՐԹԹՈՂԱՍԻ ՄԱՏՄԱՂ ԿԱՊԴԻԲՆԵՐԻ-
ՄԱԿ. անձրեց մանր շիթհրով քամւում էր երկնքից, բայց
մեր «տունը» չէր կաթում, որովհետև ճիւղերը միմեանց
հետ կապել ու պնդացրել էինք տերեւներով: Մեր նասած
տեղից մի քանի քայլ հեռու՝ անմահական աղբիւրն էր քըլ-
քըլալրով հոսում. այդ աղբիւրը նշանաւոր էր իր երբեմի
ունկյած խորհրդաւոր այցելուներով, սակայն այժմ մեր
ուշագրութիւնը գրաւել չէր կարողանում. շատ էինք ջարդ-
ւած:

Յուրաքանչյուր է առ և առ ված է ինք: Նոր հրահրուած կրտսել
վրայ խորոված վայրի խնձորները մեր ստամօքսին ոչինչ
չէին տալիս, իսկ Շատախի ցուրտը, մեր ցնցոտի դարձած
շորերի արանքով իր ոյժն էր փորձում մեղ վրայ:

Մի այլ ծառի տակ, կրակի կողքին ես էի նստած, իսկ
ինձ մօտ պառկած էր ընկերոս, գլուխը ծնկանս զբած: Շատ էի
յոդնած, բեզպարած. ես էլ էի պառկել ցանկանում, բայց ըն-
կերոջն հանգստութիւնը խանգարել չէի կարող: Անհաւասար
կռուի մէջ նա վիրաւորուած էր և կռուի դաշտից մինչև այդ-
տեղ՝ երկու օր քայլել էր մեզ հետ հաւասար, առանց տըն-
քալու, առանց նոյն իսկ շալակի պարկը վրցնել թողնելու:
Այժմ նա պարկել էր ինքնամոռաց դրութեան մէջ, աչքերը
փակած, առանց շարժուելու, առանց մի ձայնի. — միայն
շնչառութիւնն էր, որ ուղցնում և իջեցնում էր կուրծքը:

Ես նայում էի ընկերոջս գունատ, նիհարած դէմքին,
երկար ժամանակ չը խուզուած մազերը եկել, խճուած փուն-

Հերով կախուել էին ճակատի մի կողքից, շրթունքները հըպ-
ւած էին իրար, իսկ ամբողջ դէմքին փայլում էր անխռով
նինջի կնիքը:

Ընկերս բաց արաւ աչքերը, նայեց երեսիս, մի քիչ
կանգ առաւ, և նորից ծանրօրէն իջեցրեց կոպերը, կարծես
մի բան էր ուզում ասել, բայց չասեց: Անցաւ բաւական
ժամանակ, և մի անգամ էլ ընկերս բաց արաւ աչքերը, եր-
կար նայեց ինձ, զլուխը քիչ բարձրացրեց, ժպտաց:

— Զե՞ս ծիծաղի, — ասաց նա:

Զը համկացայ ասածը, բայց ուրախացայ, որ նա ժըպ-
տում է:

— Մի բան ասեմ, չես ծիծաղի, — կրկնեց նա:
— Է՞ն, դուն էլ... ինչո՞ւ պէտք է ծիծաղիմ, — պատաս-
խանեցի նրան խրախուսական ձայնով, մտածելով, որ ըն-
կերս անշուշտ մի գտղտնիք ունի ասելու.

— Գիտե՞ս, — շարունակեց նա՝ նոյն ժպիտը երեսին, —
յանկարծ միտս ընկաւ, որ ես մայր ունիմ այնտեղ, շատ
հեռու... և սիրոս... ուզեց...

Ընկերս լոեց. իսկ արտասուքը երկու խոշոր կաթիլ-
ներով գլորուեցին ոսկրացած այտերի վրայով, մինչդեռ ժը-
պիտը գեռ հստած էր շրթունքներին:

Ես զգացուեցի, աչքերս լրցուեցին:

Ընկերս տեսաւ այդ և առանց այլ ես մի բան ասելու՝
աչքերը փակեց, բայց այս անգամ նրա դէմքը տիսուր էր,
թախծու...

Եւ երեկոյեան, տոպրակը շալակած ուժասպառ, ծանր
թանչելով, նա էլի՛ քայլում էր մեղ հետ նոյն ճանապարհով,
դէպի նոր կոր, դէպի գերեզման...



ՊԱՏԿԵՐԸ

(Պետրոս Սեղմանի յիշատակին*)

Թաւշապատ դիւանի վրայ անհոգ տարածուած, ծուլօրէն
ծխում էի ձեռքիս թանկանոց ծխախոտը, և քուլաներն ան-
մեղ զուարձութեամբ բաց թողնում սենեակի մէջ: Միտքս էլ
էր հանգստանում. ոչ մի բան չէր խանգարում իմ յետ-կէ-
սորեայ խաղաղութիւնս: Մէկ-մէկ միայն հարեան սենեակից
ուրախ-ուրախ թոչկոտող երեխաներիս քրքիջներն էին տա-
րածում, և էլի լոռում:

Իսկ իմ դէմ ու դէմ, ու շրջանակում, պատի վրայից
կախուած էր նրա պատկերը: Աննպատակ թափառող հայ-
եացքս յանկարծ կանգ առաւ նրա վրայ և մեխուեց այնաեղ:

Հայդուկի տոպրակը՝ մէջքին, հրացանը՝ ձեռքին, փամ-
փլցտակաները պինդ կապած, սօլերը հագին, մաքուր-մեղմ
հայեացքն աչքերիս գցած՝ նայում էր նա ինձ:

Ու միտքս շարժուեց. և ես յիշեցի...

Յիշեցի ձիւնապատ, բարձր լեռները. յիշեցի խոր-խոր,
մթին ձորերը, որտեղ ես և նա, մեր ընկերներով՝ ձեռք-ձեռ-
քի տուած, սիրտ-սրտի յարած՝ սուրբ զաղափարի անունով
մոլուած, մաքառում էինք, մագլցում՝ սարը ենելու, խոտի
արմատներ դաշոյնով հանում՝ մեր ստամոքսի բողոքը լըռե-
ցնելու... յիշեցի գեր-հերոսական մեր կոփէները, սիրտ
թրթուացնող մեր ուզմական խրոխտ երգերը, և ոտաբորիկ՝
արնոտ, մեր մերկ ոտները... յիշեցի միասին տարած մեր
այն տանջալից, բայց քաղցր օրերը... յիշեցի, և ծխախոտը
նորից վառեցի, ու ծխի թանձր, կապոյտ քուլաներն ու-
ղարկեցի դէպի պատկերը, նրան ծածկելու...

Խիզճա խօսում էր...

Նոսրացած ծխի միջից հայեացքս նորից բնուադատօրէն ընկաւ պատկերին և էլ այնտեղից պոկել չը կարողացայ:

Պատկերը շարժուեց...

Եւ ահա կապոյտ ծխի արանքից շըջանակները յետյետ խաղացին և պատկերը կամաց-կամաց կենդանանալով՝ ցած սողաց պատից, երկու քայլ արաւ, և պաղ-ցուրտ հայեացքն աչքերիս սկսուած՝ առաջս կանգնեց:

Տոպրակը մէջքին էր, հրացանը՝ ձեռքին, իսկ վզի չորս կողմը կապոյտ խալ կապած, —որ կախաղանի թոկի հետքն էր: Ես սարսուեցի և աշխատեցի չը տեսնել նրան, երես շուռ տաւ, կամ ծուխս բաց թողնել ծխախոտից՝ երեսը ծածքել, —բայց մեխուած էի. անշարժ, ճնշուած...

Իսկ նա նայում էր, նայում սպանող, ճնշիչ հայեացքով: Եւ ևս փորձեցի:

—Ընկեր, ասացի, ևս շատ ուրախ հմ...

Նա ժպտաց դառն, դառն ժպտով, և բառերը սառան շըթունքներիս վրայ:

Բայց ահա փոքր առ փոքր նրա աչքերը բոցով վառեցին, զէմքին վեհութեան փայլակը շողաց, երկու կնճիռներ եկան, նստեցին չքնաղ ճակատին:

—Ընկեր, —ասաց նա, —Ընկեր... մենք ի՞նչ ընկեր ենք... մենք էլ ընկեր չենք... Դու դաւաճանեցիր մեր այն փայլայած սուրբ գաղափարին: Եւ երբ քո նախկին ընկերներդ անվիատ քայլերով անց էին կենում փուշ ու տատասկով ծայրէ ծայր լքցուած այն ճանապարհը, երբ նրանք տանջանքի նոցի միջից բանտի ցուրտ ու մուայլ պատերն էին ճանգուտում անզօր եղունգներով, երբ կախաղանի վրայ նրանց սառած դիակներն էին ճօճում քամու բերանից, երբ հրացանի շիկացած գնդակները նրանց սրտերն էին խոլովում, անցնում, —դու նրանց մոռացած՝ անձնատուր եղար կեանքի սին վայելքներին. դու նրանց մոռացած՝ երբեմն այնպէս պաշտած, պաշտպանած վեհ ձգտութներդ քո թշուառ «ես»-ի պատին մեխեցիր, և երբ նրանք ցրտից սառած, փէտացած՝ քարէ բարձերի վրայ էին ննջում, դու տաք

սինեակներում թաշով զարդարուն դիւանների մրայ համար զգացիր...

Ընկեր... ոչ, մենք ընկեր չենք...

Քանի քո շուրջդ արիւն է հոսուեմ և զու անտարերի մեռնող զոհերի բառաշն են լսում ու սիրտդ չի պայթում կատաղութիւնից, քանի արիւնդ այլ ևս թանկ արժէ. քեզ համար, և քո ոտներդ ձեան սահմաններում սառոյց չեն կտրում, քանի չորս կողմդ սասանեցուցիչ անարդարութիւնները թերը լայն բայած՝ թոփքներ են անում, կեանքը մեռցնում, արիւն սառեցնում և քո անխոռվ կուրծքդ չի մըրկւում արդար զայլոյթով, ապա զու միայն մի Պիզատոս հս, որ ընկերներիդ կարմիր արիւնով ձեռներդ լուացած՝ մի կողմ ևս կանգնել... զու դաւաճան հս, որ զաղափարդ ծախու ես համեր... Ոչ, մենք ընկեր չենք...

Նրա յուղալից վերջին բառերը սիրտ շանթող շեշտով թնդացին սինեակում, և ևս սարսափած, աչքերս բաց արի...

Նա էլի այնտեղ էր... սկ շրջանակի մէջ, տոպրակը մէջքին, սօլերը հազին, մաքուր, մեղմ հայեացքն աչքերիս զցած...

* * *

Կինս, երեխաններս, աղղականներս... Այն կատոյտ կամարը, գարնան թռչնակների անուշ երկերը, կարկաչուն աղբերց քաղցր խոխոջները, պայծառ արեր, մախմուր դաշտերը... Ել ևս չեմ տեսնի: Դատավճիռը կարդացին արդէն, վաղն առաւտեան, իմ դաւաճած զաղափարներիս համար՝ հրացանների առաջ պէտք է կանգնեմ: Եւ հրեշտականման երեխաններիս պայծառ գէմքերը զալիս, խաւարին բանտում կանգնում են զիմացս... Սիրտս կծկւում է, աչքերս՝ այլում. լեզուս կծում հմ, բերնիցս թռչող ցաւի աղափակը զսպելու համար:

* * *

Խաւար է բանտը. խնաւ, ցաւրա, մուայլ, և երբորդ օրն է, որ քունն անսահման հեռու է փախչում կարմրած աչքերիցս: Յարդի վրայ պառկած, անզօր, ուժասպառ թեւերս կրծքիս վրայ ծալած՝ աչքերս յառել եմ խաւարին, նրա թանձրութեան միջից մի բան տեսնելու, նրանով զբաղուե-

լու, բայց ոչինչ, ոչինչ... խոր է խաւարը: Իսկ գուշտը
միայն իմ պահապանիս միատեսակ, համաշափ քայլերի ձայ-
ներն են թնդում, և նրանց ձանձրացուցիչ բաղխումների տակ՝
ճմյուռմ է հոգիս:

Դարձեալ խաւար է անթափանցելի, հեղձուցիչ խաւար... և ես աշքերս անկիլ հմ նրան:

Բայց լոյսի մի փունջ պատռեց խաւարը և այնտեղ նորից ես տեսայ նրան, աշերը հագին, տոպրակը մէջքին... վզի չորս կողմը պատող կապոյտ խալից լուսոյ ճաճանչներ էին գուրս ցոլում, շրթունքներին փայտում աննման մի ժրպիս, իսկ գեղեցիկ աշքերն իսձ էին նայում մի սիրազեղ, անոյշ հայեացքով:

Հն բազուկեներս խանդավառ պրոտով դէպի նրան տարածեցի:
—Ընկեր, ալո դժու ե՞ս, բացականչեցի:

—Ես եմ, —ասաց նա քաղցրահնչիւն ձայնով, —ես եմ,
սիրելիս:

— Ի՞նչո՞ւ համար ես եկել այս մռայլ բնակարանս:

— Մերձաւորներիդ ահաւոր ցաւը արձագանք տուաւ սրտիդ խորքերում, քոնը մոռացար, և նրանց օգնելու վսեմ տեսչանբով՝ յախուռն թափով եռացող կեանքի յորձանուտի մէջ սեփական բաւականութիւնդ գտնել ցանկացար։ Դու կատարեցիր սուրբ պարտականութիւնդ, և ես հկայ քեզ այցելելու... չէ՞ որ մենք ընկերներ ենք։

Ապա նոյն անմեկնելի ժաղիւլը թերնին՝ կուցցաւ և մաքուր, ըսկերական ջերմ սիրոյ շվթունքներով՝ տաք-տաք համբուրներ դրաւ, ճակատին:

Սիրոս լայնացմաւ, հոգիս պարարուեց երջանիկ լուսոյ ճառագիթներից և ուրախութեան արտասուբները երես լուսացին...

Բայց նա գնում էր...

Նա կամաց-կամաց հեռացաւ ինձնից էլի ժպտալով.
լոյսն ազօտացաւ և նա ձուլուեց խաւարի հետ:
—Մի՞ գնա, ընկեր ջան... ևս ել եմ գալիս.—կանչեցի
իտեւից և ոտքի թռայ:

* * *

Էլի՛ նոյն բանտը, խոնաւ, մուայլ և ցուըտ:
Օրը բացւում էր. կեանքիս վերջին օրը:
Բայց ես հանգիստ էի, մխիթարուած:
ՄԵնք ընկերներ էինք...

ՔԱՐԱՆՁԱՒԾ

ՔԱՐԱՆՉԱՒԾ

Արտօսի փէշի վրայ, ուղիղ շրեղազարդ հովտի ծայրում, որտեղից դէպի Շատախ տանող լեռների կոտտակումներն են սկսում, փոքրիկ, վճիտ աղբիւրի կողքին գտնվում է մի ընդարձակ քարանձաւ: Ոչչի չէ ծառայում այդ քարանձաւը, ամառուայ շոգ օրերին միայն, եթի Ամիրանցի Մուստաֆա-փաշայի խաչները բերում են սար, հովիւները մէկ-մէկ գիշերում են այնտեղ: Իսկ այժմ հոկտեմբերի սկզբաները լինելով՝ նրանք վաղուց արդէն իջել էին աւելի տաք տեղեր, և արօտներն ու լինեները մնացել էին վայրի ոչխարհների ու այծերի տրամադրութեան տակ: Մէկ-մէկ միայն Շատախու գիւղերից վատահանում էին գիշերները լեռների ծայրերն ու ժայռերը քերելով անցնել դէպի Քերծ, այնտեղից Վան մտնելու համար:

Եւ հեշտ չէր այնտեղով անցնելը. զանազան առասպե-
լանման պատմութիւններ էին տարածուել շրջակայքում, որ
իբր թէ Արտոսի փեշերին ոտք դնողն այլևս տուն չի փերա-
գանուում, անհետանում է, նրան բռնում են «աներևսոյթնե-
րը». այդ պատճառով քուրդ կամ տաճիկ ճանապարհորդնե-
րը Ոստանի վրայից էին անցնում դէպի թաղ, զգալի շրջան
կազմելով...

Բայց այն զիշերը քարանձաւում ինչ-որ մարդիկ էին տեղաւորուել, որոնք ոչ ովկիւների և ոչ էլ ճանապարհորդների էին նմանութեած: Քարանձաւի ձախ կողմում թէժ կրակ էր արուած, որի լոյսը դրսից չէր երևում, իսկ չորս կողմը նստուած էին մի խումբ երիտասարդներ, քըրըրուած շորերուու ու ոտնամաններով. բայց ամեն մէկը զոյզ-զոյզ փամփուշտականեր կապած, դաշոյնը կողքին, իւղամանն ու թիթեղ հայ ջրամանը միւս կողից քարշտուած, մի-մի կտաւից կարած տոպրակներ մէջներին պնդացրած, և հրացանն էպատրաստի՝ ծնկներին դրած:

Հայդրելէներ. Էին: Զանազան կողմերից ու երկրներից Մեծ Գաղափարը նրանց բերել, միացրել էր այդտեղ, և երկար ժամանակեա միասին կրած դառնութիւններն ու տանջանքները նրան-

մէջ կոել էր անբաժանելի ընկերական մի կապ. միայն գնդակն էր նրանց իրարից խուռմ:

Քարտանձաւի երկու կողմերում հսկում էին հայդուկներից երկու ուրիշ երիտասարդներ; անդադար մի քարից միամ անցնելով, գիշերային մթութեան միջից ուշադրութեամբ ականջ զնելով ամեն մի ձայնի, ամեն մի չըխկոցի: Ո՞վ զիտէ. թէև այդպիսի ժամանակ այդաեղ սատանաներն էլ երեալ չէին կարող, բայց հայդուկային կեանքում պահապանութիւնը մի սրբագործուած օրէնք է, որին պէտք էր հպատակուել:

Իսկ քարտանձաւի ներսը, կրակի վերևի կողմից հայդուկներից մէկն է պատկած. նրա դէմքը պլուած է, աչքերը կիսաբաց, երեսը՝ սակրացած, և զառանցում է տաքութեան մէջ. ոտների տակերն ու երեսն ուռել են, ջրակալել սպիտակուչկներով բարձրացել նրա շալուարի մի փողքը ծնկնից ցած՝ չը կայ, պատուած է, քրթուած, փաստակ՝ հնամաշ և ծակերով, որոնցից երկուն ապարդիւն անցած գնդակների հետքեր:

Փոքրիկ աղբբակից ճակատին քուռող պաղ ջուրը նրան չի օգնում, նա ուշքի չի գոլիս, իսկ իրենք վաղը պէտք է ճանապարհ ընկնեն, գեռ որքան աեղ ունեն անցնելու... Գունէ ոտքերին մի ճար պէտք էր անել:

Եւ հայդուկներից մէկը, աւելի փորձուածը, դանակը հանց գրպանից, և հիւանդ ընկերոջ երկու ոտքերի ջրի ուռուցքները պատուեց, ջուրը բաց թողեց, տպա հանեց գազմու, ծայրը խոթեց կրակի մէջ, և երբ շիկացաւ, կասկարմիր դարձաւ, հանեց կրակից ու սկսեց ոտների տակի բըշտիները գաղել...

Ճենճերային խանձանուութիւնը տարածուեց քարտանձաւում. քարտասիրած հայդուկների աշխերից արցունք քամուեցան:

Մի քանի ժամ անց՝ հիւանդ հայդուկը ուշքի եկաւ, նայեց փալաս-փուլասով փաթթած ոտներին, ինչ որ ասաց և քնեց հանդիմու, անխոռվ քնով:

Առողջանուում էր...

ԱՍՏԱԲ

I

Մոնչում է փոթորիկը, ծփում են Աղթամարի կապոյտ ջրերը, փրփում, ուռչում, բլրանման կոհակներով զարկում ժայռոտ ափերին, և ուժեղ շառաչմամբ փուլ գալիս, ձուլւում ջրերին ու յետ նահանջում, նոր-նոր արշաւող կոհակներին ազատ ճանապարհ տալու համար:

Եւ խորին խաւարի ու բնութեան արհաւերքների միջից մի թեթև նաւակ ալիքների վրայից երթեմն անդունդը սահելով, երթեմն դէպի վեր, երկենք թուշելով՝ Աղթամարի յուզուած երեսն է ակոսում:

Կոհակների ձեռքին խաղալիք դարձած փոքրիկ նաւակն էլ վազուց է, որ չէ լսում զեկին, և նրա մէջ նստած մի խումբ մարդիկն՝ այլևս յօդնած կատաղի ալիքների դէմ մղած պայքարում իրենց յանձնել են փոթորիկի կամքին:

Մինչդեռ հէնց իրենք են փոթորիկը:

Մի ամբողջ մարտիրոս ժողովրդի լիոնացած վիշտն ու յոյզն իրենց սրտերում ամբարած, տուն-տեղ մոռացած, հանգիստն ուրացած, նրանք լեռներին են հաւատացել իրենց արտունջը, և գնդակներին՝ իրենց բողոքը: Նրանք երկրի տանջանքների ծնունդն են, ըմբոստութեան մարմնացումը, արեան բովի մէջ կուռած, և հրդեհներում կոփուած: Նըրանք մոնչում են, երբ ուրիշները քծնում են և աղերսում, և նրանց սիրալ թնդում է հրաբուխի նման, երբ մորթուուղ կանանց ու երեխաների ճիշերն են լսում:

Եւ իրենց նման անհանգիստ, իրենց նման փոթորիկուած ալիքների վրայից նրանք գնում են դէպի այստեղ, միւս կողմը, որտեղ նոյնպէս արիւն է ծորում, արցունքը հսուում և հեծեանքն ու անէծքը միասին խառնուած՝ երկիրը գողացնում: Նրանք գնում են, որովհետև նրանք են

ըի փրկարար ոգին, որովհետեւ նրանք են, որ բոլոր տաճածածների համար պէտք է բողոքեն, և իրենց առաջական կը թքիրնին դէմ տան վահանի նման՝ հարուածների առաջ:

II

Մռնչում է փոթորիկը:

Եւ Գէորգ-Զաւուշը նաւակի մի ծայրին նսասած, ուշազրութիւն չի դարձնում չորս կողմը շառաչող ալիքների ծփոցներին. Նա չի նկատում, որ Աղթամարը եռում է, փրփրում, այլ արծուի աջքերը սկսուած խաւարին, կտրծեսուում է պատռել մթութեան թանձր քօղը և այնտեղ, հեռուն թափանցել.

— Ել ալիքներին չեն կարող յազթել, —ասացին թիավարները, Գէորգ-Զաւուշին. —Կորցը ենք ուղղութիւնը... որ կողմն ենք գնում, չը դիտենք:

— Ալիքնմբը... թող տանեն, որտեղ ուզում են. —պատասխանեց Զաւուշը, և նորից աչքը տնկեց խաւարին:

Խիզախող յորձանքները մի անգամ էլ գրոհեցին, գրկեցին նաւին, երկինք հանեցին, և տակից սահելով բաց թողեցին բարձրից. Նաւակը ճռնչաց, տնքաց, տատանուեց աջախ և ալիքների ուժգին մզումով՝ շպրտուեց առաջ:

Ուզիղ դէմ ու դէմ, մթութեան շղարշով դէմքերը պատած հսկաների նման, վիթխարի ժայռերն են ոտները խրել ծովի յատակը և չեն էլ զգում, թէ ալիքներն ինչպէս են կատաղած՝ իրենց ոտները լիզում ու ծիծում. —Նաւը նրանց դէմ առաւ:

— Օ, սիրած ժայռեր, —ասաց Զաւուշը. — դէմ, աղէրը, իջնենք. ահա ափը:

Մի քանի ջլուտ բազուկներ ձգուեցին դէպի ժայռերը, նաւը իր տեղում մեխուեց, և միմիանց յետեկց մի խումբ տղամարդիկ, ոտքից մինչև գլուխ դինուած՝ ափը դուրս թռան:

III

Խսկ իրենց յետեկում Աղթամարը գեռ շարունակում էր ոռնալ ու գոռալ:

— Շատ ենք շեղուել, —ասաց Աստաբը, — մենք կծվակի մօտերն ենք իջել:

— Այն, — պատասխանեց Զաւուշը, — բայց վասա չունի. գիշերս լեռների վրայից կը շարունակենք մեր ճանապարհը, մինչև լոյսը կը բացուի:

Ու նրանք շարժուեցին՝ թրջուած շորերով, ցուրտ քամուն դիմագրաւելով:

Ծովափին ընկած ճանապարհը շատ է քար քարոտ ու տաժանելի. Նրանք զլորում են, նորից բարձրանում, քարերը գրկում, ժայռը մագլցում, էլի ցած սողում, մատներնին արինոտում, ծնկներնին չարգում, բայց առանց «ուփփի», առանց ցաւ արտայայտող որևէ է ձայնի:

Այդ երկրի ոգիներն են դրանք, տաճանքում բովուած, և արհամարհում են բոլոր տաճանքները:

Խսկ որսորդները... Խնչեր չէին տայ, եթէ այդ ամեն տեղ լինող, բայց միշտ աներեսյթ ոգիներին բանել կամ չնշել կարողանային: Բազմաթիւ անգամ ցանցեր էին զցել, բայց ապարդիւն: Փրփրում էր փաշան, նոր զաւեր նիւթում, միմեանց յետեկից հրամաններ արձակում, որ ամեն տեսակ զգուշաւորութիւններ ձեռք առած՝ բոլոր անկիւններում նրանց որոնեն, նրանց սպասեն:

IV

Խումբը շարժում է. զրոյց անելու կամ հանգստանալու ժամանակ չունին. մէկ-մէկ, միայն առաջնորդի «քելէք» շտապեցնող ձայնն էր լաւում: Եւ նրանք քայլում էին ծովափին ընկած քարքարուաներով:

Յանկարծ քարերի տակից ինչ-որ ուրուականների մի երկար շարան իրենց դէմը ցցուեց. կառավարութեան պահակախումբն էր այդ, որ գիշեր-ցերեկ հսկում էր այնտեղ, համոզուած լինելով, որ Գէորգ-Զաւուշը իր արծուիկներով փոփորիկներին անգամ գաղար չի առնում, ու կարող է պատահել որ այդ գիշերն էլ այնտեղ երեաց:

— Ո՞վ է... կանգնիր, — թնդաց հրամանը պահակախմբի կողմից:

— Տղէրք, զօրքն է. — կանչեց Զաւուշը, — պատաեցէք շղթան, անցնենք լեռները:

Եւ ալիքների ծփոցներին ու փոթորիկի ոռնոցներին միացան հայդուկների հրացանների որոտոցները: Պահապան-

Ները յետո ընկրկեցին, քարելի տակ սպանուածների դիակ-
ները թողնելով՝ Բայց շուտով՝ ուշաբերուելով՝ քարերը վաշ-
հան բռնած, սկսեցին կարկուտի նման ամեն կողմից գնդակ-
ներ տեղայ:

Յետեկից՝ ծովը, առաջից՝ զօրքը...
—Յառաջ, լեռները, —Զաւուշն էր, կանչեց, զարկեց
շպթային և իր խմբակով պատռեց ու անցաւ:

V

Մոնչում է փոթորիկը, ոռնում է ծովը, իսկ նրա քարքարոտ, ապառաժ ափին ընկած է Աստարը կրծքից վիրաւոր, որահղից կարմիր արխմանը ծորածոր շիթերով կոզիքի քարերն է ծիրանի ներկում։ Վիրաւորուած է Արծուիկ Աստարը. թշնամու գնդակը իր գործն է տեսել, և ընկերները չը նկատեցին, թէ ինչպէս նա ընկաւ թեթև տնքոցով, առանց անէծքի, առանց գանդատի։

Մթազնող աչքերը չորս կողմն է յածում կտրիճ Առտաբը, և ձեռքը մեկնում դէպի անբաժան, իր կեանքի ընկեր—սիրած հրացանը. բայց վէրը ծանր է. թուլացած ձեռքը կամաց իշնելով՝ նորից զարկուում է ապառաժ գետնին:

Հնկելները հեռու, օթոցը՝ քարեր, բարձը՝ ապառաժ,
իսկ իր գիմացից ուրուականները բարձրանում են և հետըզ-
հետէ մօտենում ափին։ Տաճիկներն են այդ, որ դէպի նրան
են յառաջանում զգուշաւոր քայլերով։

Ուժգին զարկերով լսաբախեց սիրտը վիրաւոր արծուեի...
և յանկարծ ցնցուեց Աստաբը. սպառուած ուժիրն անյայտ
աղբիւրից լցուեցան հոգին, և ամուր ճանկով ճանկեց հրա-
ցանը, ճամբուրեց նրան և ուժեղ թափով նետեց ծովի մէջ:

Եւ երբ հրացանի ջրին զարկուելու ճղփոյը լսուեց, ինըն
էլ ծառացաւ, մի խոր ճառաչանք արձակեց կրծքից, անեղ
ոստիւնով նետուեց դէպի ծով, հրացանի ետքից...

Եկաւ թշնամին, մօտեցաւ ափին, հոտոտեց արիւնը հերոս-հայդուկի, նայեց փրփրայոյդ ծովին, և մարդկային մարմնի ջրերին զարկուելու ձայնը լսելով, կուզէկուզ գալով յետ փախաւ ափից:

Առաւօտեան մթնշղողին սարի ստորոտին ծայր տուաւ
մի ահագին-սև զանգուած, որ սարսափ ազդող խորհրդաւո-
րութեամբ առաջ էր շարժւում։

Ճարիրն էր Նորդուզից ճաւաքած իր արիւնուշտ աս-
պատակներով գեափ Վան էր արշաւում, Այգեստանի հերո-
սական ճիգերի գերեզմանն ստեղծելու:

Գիւղը նկատեց զանգուածը. Նրա սովոր աչքը տիսաւ ճանաչեց, և իրեն կրցցրած՝ կծկուեց, կուչ եկաւ.

—Գալիք են, փախէք...—ընդհանուր լքման բռպէին լսուեց մէկի «փրկարար» ձայնը, և կին, երեխայ, ծեր ու տղամարդ, ով ինչ կարող էր, կոնակն առնելով ցանուցի եղան զանազան ուղղութեամբ, սար ու ձօրերում, քար ու քոյերում ապաստանելու, կեանքը փրկելու:

Այսի Խուսիկն էր, որի ականջը միշտ մի որ և է ձայնի էր սպասում, ամբողջ մարմնի մէջ դուզց ամբարած զըսից տուն վազեց:

Դեռ անցեալ տարի, երբ իր ամուսնուն՝ Հայոց Զորում սպանել էին, Էլ իր համար ոչ մի սփոփանք, ոչ մի թանկագին բան աշխարհիս երեսին չէր մնացիլ, բայցի Բաղկելը մի տարեկան, մինուճար տղան, որին այնքան էր սիրուած ուրքան կարող էին սիրել այն գիւղի բոլոր մայրերը, ի մգումարած:

Բայց չէ, մենակ թաղիկը չէր. կար էլի մի անշուն
առարկայ ևս, որ այրի Խուսիկին պատում կարողացել է
իրա համար բաժին գրաւել:

Դա մի կապոց էր...

Մարդուն կորցնելուց յետոյ, այն ամենը, ինչ որ Բազիկի բախտաւոր ապրելուն կարող էր նպաստել մհծացած ժամանակը, Խուռիկն աչքի լոյսի պէս հաւաքել, այդ կապոցում էր ամփոփել, և ամեն անդամ, երբ բաց էր անում կապոցն ու միջի իրերը մէկ-մէկ վերցնում, նայում, գուրգուրում, նրա երեսին մի այնպիսի զմայլանք ու բաւականութիւն էր ցոլում, որ կարելի էր մտածել, թէ այդ բոպէին նրա համար Բազիկն առանց կապոցի և կապոցն առանց Բազիկի՝ նշանակութիւն չունեն:

Եւ երբ սարսափի ձայնը տարածուեց, իսկ հրոսախումբը մթութեան միջից աւելի որոշուեց, որ դէպի գիւղն էր արագ արշաւում, այրին վեր թռաւ, գրկեց Բազիկին, կապոցն էլ չետը և լեղապատառ դէպի սարը վազեց:

Սարը հեռու էր. իսկ հրացանների ձայններն ու սպանողների բառաչոցներն արդէն սկսել էին օդը թնդացնել. մի քանի բոպէ էլ և գիւղի ծուխը երկինքը սեացը եց:

Յետ նայեց Խուռիկը, դողաց, սարսուց, երկու գանձերը հուպ տուաւ կրծքին, և մահաշունչ ահից ուժերը հաւաքած՝ զուեց ոտներին:

Վազեց մի կէս ժամ. կէս ժամ էլ վազեց. սարը դեռ չը կայ... Ոտներն արդէն ծալւում են, թոքերը սեղմւում, շունչը կարւում, կռներն արդէն թուլացել, և ոչ Բազիկին, ոչ էլ կապոցը պահել չեն իշխում. երկուսն էլ սահելով՝ քիչ է մնում ընկնեն:

Խուռիկն այլ ևս ոչինչ չի զգում. խելառի նման դէսդէն է նայում, մի ելք մտածում, բայց մթազնած ուղեղին ոչինչ չի նստում. Նորից գերբնական ճիգեր թափելով՝ աւելի շուտ թաւալուելով, քան թէ վազելով՝ դէպի սարն է դիմում:

Յանկարծ... նրա աչքերը փայլեցին բերկրանքով. Ուղիղ իր առաջ, ձորի բերանում, երեաց մի խոր, ահաւոր մի փոս:

—Կապոցը նետեմ այս փոսը, յետոյ կը հանեմ մի կերպ... ոչ ոք չի տեսնի.—անցաւ նրա մտքով, յետ յետ նայելով մի շարժում գործեց և կապոցը թռաւ անյատակ հորը:

Թեթեացած մայրը հրեխան պինդ սեղմած գրկին, նոր ոյժ ստացած և ոգևորուած նրանով, որ իրեն անշուշտ պիտի յաջողի երկու թանկագին իրերն էլ վրկել, թռաւ ձորի միջով, և առանց մի բոպէ հանգիստ առնելու, վրկարար սարի գոշը բարձրացաւ, ու այժմ միայն հոգոց հանելով՝ կծկուեց մի մեծ, ալպառած քարի խոռոչում:

Անցաւ մի երկու բոպէ. բայց Բազիկն իսկի ձայն չի հանում... գուցե քնած է:

Խանդաղատանքով այրին կռացաւ ու կրկին նայեց: Նայեց, ծառացաւ տեղից, նորից կռացաւ, նայեց երեխին, նորից վեր ցատկեց, և ահեղաձայն, հոգի խորովող մի ճիշ հանելով՝ գետին տապալուեց...

Մահահոտ տափնապի և շփոթի բոպէին, որդուն փըրկելու ճիգերով շշմուած՝ թշուառ Խուռիկը կապոցի փոխարէն՝ որդուն էր անդունդը նետել...



ին ներկա ցը լուս զուտ այս ներկ ցցործ
ունի ամ դիցու այս ապաւ... հասկա է որ չու պայման
ինութիւն առ ապաւ և ունեցա խօսից մի ինքուն

ՄԵԾ-ՏՕՆԻՆ

Բուլարու առաջ նստած էր Տէր-Ակովիը, ծերունազարդ պալմիը թեքում՝ ծնկներին գրած Աստուածաշնչին, սաղմոսներ էր քաղում. իսկ իրա պատաւ տիրակինը բուխարու միւս կողմին կուչ եկած՝ խորշոմած ձեռները կրծքին խաչուծ, զլուխիւն խոնարհած՝ հանգարտ, անձայն լալիս էր և արտասուրքն ակօսելով նրա վշտոտ երեսը, առատ կաթիլներով ցած էր զլորւում, և շրթունքների մօտ ծծւում սպիտակ քիթեալի մէջ:

Եւ այդ նոր չէր: Այն օրուանից, երբ իրանց Արէլը
կորաւ: Այդ օրուանից ամեն օր նոյնն էր կրկնուում: Տէր-
Ակովը, միանգամայն փշուուած պատահած դժբախտութիւնից,
էլ եկեղեցի գնալ զանգը քաշել չկարողանալով, Հին և Նոր
Կտակարանների մէջ էր գտնում իրա միսիթարութիւնը: Ակ-
նոցը ծերուկ աշքերին հացցրած՝ առաւօտուանից մինչև ուշ
գիշեր, անվիրջ կարգում էր ու կարգում, իսկ երբ աշքերը
շաղուում էին, տառերը շփոթուում, միմեանց գլխով ընկնում,
նա իր դողացող ձեռներով փակում էր գիրքը, մտնում ան-
կողին, և այնտեղ էլ սկսում սաղմուներ մըմնջալ: Տիրակինն
էլ, հէնց որ տէրաէրը Աստուածաշունչը գնում էր ծնկնե-
րին, ինքն էլ նստում էր և անձնատուր լինում իրա անձայն
լացին:

Այս անգամ արդէն երբորդ Զատիկին էր, որ նրանք վշտաբեկ, սրտախորող երկար գիշերն անց էին կացնում ա-

ուանց Արէլի, առանց աչք կպցնելու, անքուն, կարծես մի-
խարհըդաւոր հսկում կատարելով:

Տէր Ակափն ակնոցը դրաւ աչքերին, ուզում էր կարգավ, բայց մէկ էլ՝ գիրքը ցած դրաւ, ակնոցը վերցրաւ, ծաղկեց ու մարող աչքերը ցցեց աստիճանաբար հանգչող կրակին. նա այդ բոպեէին իր սրտի խորքէրում ցանկանում էր, որ պառաւն սկսի խօսել՝ խուսակցութեան անսպառ նիւթ մատակարարող Արէլից, բայց պառաւն իրա անքուն աչքերը ցցած ծնկներին, յումառութեամբ լուռ էր կացել և սրտումը եռացող վշտից՝ դանդաղօրէն գլուխն օրորում էր, և մէկ-մէկ, մատների ծայրով՝ աչքերում հաւաքուած արտասունքի կաթիները փրցնում:

Երբորդ Զատիկին է լուսանում, բայց մեզ համար՝
ու ու մթին...—վերջապէս մըմիջաց տիրակինը, կապոյտ
թաշկինակով կարմրած աչքերը սրբելով:

— Մեծ է Աստուծոյ զօրութիւնը, այ կնիկ, մեծ...
պատախանեց ծերունին, ուրախանալով, որ Աբէլից պէտք
է խօսեն.—Կամք Տեառն օրհնեալ եղիցի... ինչու ես քարով
տալիս Աստծուն:

— Ես Աստծուն քարով չեմ տալիս. ծառայ եմ Նբան...
բայց ի՞նչ անեմ, սիրտս չի դիմանում... ախր թաթախման
իրիկունն անցաւ, ահա Զատիկին էլ կանգնած է դռանը, ա-
մենքն ուրախ սրտով «Ծնորհաւոր Զատիկ» պէտք է ասեն,
իսկ մենք... ինչո՞վ ուրախանանք. էլ ո՞վ ունէինք, բացի
Աբէլից... և գեռ ապրում էլ ենք... պինդ է ճակատնիս...

—Աստուած միծ է, Աստուած միծ է.—աւելի իրան, քան
թէ կոսջը յուսադրելով՝ ասաց Տէր-Ակոփը, ձեացնելով, թէ
ահա Աստուածաշունչը պէտք է ձեռքն առնի, մինչզեռ սպա-
սում էր, որ պառաւն էլի կարտասանէ այն սիրելի անունը,
և ինքնն ականչ կը դնի.

— Գոնէ մի բանում մեղաւոր լինէք, — զլուկից տարու բերելով՝ մրմնջաց պառաւը. — Եթէ ուրիշները չեն իմանում մենք իսօ գիտենք, որ նա մեղաւոր չէ, բայց մեզ չհաւատացին... ու տարան...

— Եթէ ուրիշները չը գիտեն, Աստուած դիտէ, Նա արդարին մեղաւորի հետ չի դասի. — Խրատեց տէրտէրը, սակայն ինքն էլ համոզուած լինելով, որ այդ հաղարերորդ անդամ կրկնած պատճառարանութիւնները շատ քիչ միսիթարական են տիրակնոջ համար:

— Մեզ չհաւատացին, չհաւատացին... — սրտի ցաւերը մեղմելու համար ծնկները իւր խորշամած ձեռներով շփելով շարունակեց տիրակինը. — Էն սև ու մթին օրը երեխաս իսկի տնից դուրս էլ չէր եկել, մի տեղ չէր գնացել... բոլորը «նրա» բաներն էին, «նա» մատնեց: «Նրա» սիրան էլ մերի հման կակծայ, կրակ ընկած վառուի, որ իմանայ, թէ ինչ էր իրա արածը:

— Հա, հա... «նա» մատնեց երեխաս. — համաձայնից տէրտէրն ու զողոյնուն մատներով իւր ձիւնաներ միրուքը շփեց, միենոյն ժամանակ յարմար համարելով մատներից մէկն աչքերի մօտով անցկացնելու, ուր մի կաթիլ արտասուրք բոնադառորէն եկել, կախուել էր, և տէրտէրի հոգեկան դրութիւնն էր ուզում մատնել տիրակնոջ, որից ծերունին միշտ թագցնել էր ուզում:

— Երբ «նրանք» եկան գիւղն ու խառնակիշներին էին ման գալիս, — առաջ տարաւ պառաւը, — տունն աւելուածը ծածուկ գնաց ու յայտնեց սուստ տեղից, թէ՝ մէկն էլ Սրէն է. Մոսկով է կարդում... շորերը մի տեսակ են, և իրան, չնայելով որ տանուտէր է, խայտառակել է: — Քո տունը հրեղէն սուր ընկնի, բա կարդացողի շորերը մնց կը լինին... սև հացին կարօտ մնաս, բաս ինչպէս չխայտառակէր քեզ, որ իրա առաջ էն խեղճ, հիւսնդ Մաթոսին ոտիդ տակը տուսձ ջարդում էիր...

— Հա, վատ էր ջարդել. — հաստատեց տէրտէրը. — Քիչ էր մնում, պիտի մեռնէր. գնացի, սրբութիւն տուի... Էհ, թող Աստուած լինի «նրա» դատաւորը:

— Աստուած վատ մարդու դատաստանն ուշ է անում. — արտնջաց տիրակինը. — «նա» իրանն արել, պրծել է. թռղ մեր ջանը դուրս գայ:

Պառաւը լոեց. լուռ էր և Տէր-Ակովը, Եւ նըսանք այդպէս երկար-երկար նստեցին լուռ ու մունջ: Գուրան էլ ձայնածուն դեռ չէր լուռում բոլորովին. երբեմն միայն՝ գուան առաջ կուչ եկած Բողարն էր երազի մէջ թշնամու հանդիպում, մի երկու անգամ քնի մէջ մոռում, ու նորից լուռում:

Բուխարու, մէջ կրակը բոլորովին պակասել էր, իսկ տէրտէրի և ալիրակնոջ չորացած մարմիննին ջերմութիւն էին պահանջում. պառաւը գանդաղելով մօտ բերաւ մի զիրկ-փայտ, և գիբ-զիբ շարեց բուխարու մէջ. կրակը կամաց-կամաց նորից սկսեց բորբոքուել:

Տէր-Ակովը, որ բաւական ժամանակ լուռ և անշարժ նստած էր, կրակի զուարթանսալու հետ՝ կարծես ինքն էլ սկըսեց կենդանանալու: Վշտի թանձբութիւնը, որ եկել նրա ծերուկ զէմքին էր նստել, կամաց-կամաց սկսեց տեղի տալ, և վշտի փոխարէն՝ մի աղօտ կայտառութիւն երեաց նրա մէջ:

Արդէն լոյսն ընկել էր. Տէր-Ակովն ուշագրութեամբ զէպի դուրս ականջ գրաւ, կարծես այնտեղ ծանօթ ոտնաձայներ լսելու գիտաւորութեամբ, ծերուկ աչքերը յառեց, ապա արագութեամբ ձեռքը մեկնեց Աստուածաշնչին, ակնոցները հաստատեց իրա տեղն, ու ինչ-որ անյայտ ազբիւրներից ստացած զօրութեամբ զինուելով սկսեց ոգեսորուած կարդալ սիրած աղօթքները:

Նա երբէք այդպէս ջերմագին չէր դիմել իր սիրած զրբին. նրա ձայնն այս անգամ աւելի բարձր ու պարզ էր հնչում և ամեն մի «ո՛լ Տէր» կանչելուց կարծես իր հոգին մասնիկների բաժանած՝ այդ մասնիկներից մէկն ու մէկը իր աղաղակի հետ զէպի վեր, զէպի երկինք էր ուղարկում: Որքան էլ անզօր էին նրա անքուն և տարիների աշխատանքի տակ մարած աչքերը, բայց և այնպէս՝ այս առաւօտ փայլում էին, տաքացած մի ներքին կրակից:

Տէր-Ակովն այդ բողէին աչ թէ մի ալեոր, որդեկորոյս քահանայ էր, այլ իրա հողեղէն պատեանից դուրս եկած՝ Յուսոյ և Հաւատի մարմնացում: Այդ ինչ «Յոյս», ինչ «Հաւատ» էր, որ այդքան ուժգնորէն եկել համակել էր Տէր-Ա-

կոփին, ինքն էլ չգիտէր. այս կայ միայն, որ նա հոգեպէս վեր սլացած՝ մոռացել էր աշխարհայինն ու ձուլուել անհունի հետ:

Եկուոր քահանան եկեղեցու զանգը քաշեց, և անուշ ձայնը մեղմ զողանչինով տարածուեց առաւտեան թարմ օդում, գիւղում Զատիկն աւետելով: Տիրակինը դողացող ձեռքով խաչ հանեց, հառաջեց ու մրմիջաց սրտախորով ձայնով.

— Ա՞ի, Արէլ... ախ, որդիս...

Տէր-Ակոփն ուշբ չտարձրեց կնոջ հառաչանքին. նա իր աղօթքներն էր կարդում: Տիրակինը մի քիչ լուռ մնաց, ապա գլուխն օրօրելով կանչեց.

— Ա՞ի, Աստուած, քարասիրտ Աստուած...

Տէր-Ակոփն այս անգամ, առանց գլուխը շարժելու, աչքերը վեր քաշելով ակնոցից, նայեց իրա պառաւին, մի անհանգիստ շարժում գործեց, ու նորից սկսեց կարդալ, աւելի բարձրածայն, աւելի զգացուած:

«Տէր լոյս իմ և կեանք իմ, ևս յումի՞ երկեայց. Տէր ապաւէն կենաց իմոց, ևս յումմի՞ դողացայց»:

Տիրակինը հեծկուաց: Հեծկլուաց, ոչ տէրտէրի կարգացածի տպաւորութեան տակ, որից ոչ մի բառ չէր հասկանում, այլ որովհետեւ եկեղեցու զանգն աւելի ու աւելի բարձր էր զօղանջում, բոլորին դէպի ուրախութիւն կանչելով, մինչդեռ իրա, պառաւի սրտում արիւն էր ծօթում: Տէր-Ակոփը մատը գրաւ կարդալիս տեղին, որ չկորցնէ, գլուխը բարձրացրեց, կիսազարմացած, կիսաբարկացած նայեց կնոջն ու սաստեց հրամայողի ձայնով:

— Այ կնիկ, լոիր...

— Ի՞ի, դու էլ... նեղացած խօսեց պառաւն ու երեսը մի կողմ թեքքեց:

— Լոիր, այ կնիկ,—կրկնեց ծերունին, և ուրախութիւն ծիծաղելով կանչեց,—երեխաս գալիս է... ուրախացիր:

Պառաւը կարձեց, թէ իրա դժբախտութեան ընկերը կամ ցնորուել է, կամ պատրաստում է ցնորուելու, և հէնց

այդ մաքից՝ նրա գլուխը պտտուեց, թոքիրը կծկուեցին: Իսկ Տէր-Ակոփը, դէմքն աւելի պայծառացած՝ շեշտեց:

«Լուր Տէր, ձայնի խնդրուածաց իմոց յաղաչէլ առ Քեզ...

Դուրսը մի ձայն լսուեց. Բողարը կատաղի հաջիւնով վրայ պրծաւ, որին յաջորդեցին նրա ուրախական զսկստոցները:

Տէր-Ակոփը արագ շարժումով գիւքը թոցրեց ծնկներից, և ձախ ձեռքը գետնին դիմճար տարով՝ կարծես պատրաստուելով տեղից ցատկելու, շնչառութիւնը զսպած՝ երեսը դէպի գոււը զարձրեց, տիրակինն էլ յուղուած նոյնպէս երեսը շուռ տուաւ, և երկուսով արձանացած անշարժ դէպի գոււն էին նայում, կարծես այնտեղից կեանք սպասելով:

Յանկարծ գոււը բացուեց և մի գունատ, բայց ուրախ ժպիտը շրթունքներին թրթռացող, քանն-քսանուհինք տարեկան տպայ՝ ներս ընկաւ սինեակ.

— Քրիստոս յարեալ ի մեռելոց.—Հնչեց նրա ուրախական ձայնը սինեակի լուութեան մէջ:

— Արէլ... հչաց պառաւն ու վիր թռաւ:

— Օրնեալ է Յարութիւնն Քրիստոսի, —ոչ իրա ձայնով, հանգիստուոր շեշտով գոչեց Տէր-Ակոփն ու իրա տարիքին չհամապատասխանող ճարպկութեամբ պոկուեց տեղից:

Մի վայրկեան չանչած երկու զառամհալները, ուրախութիւնից խօսել չկարողանալով՝ ոսկրացած թեերով գրկել էին Արէլին, գատով արդարացած Արէլին, և սեղմում էին իրանց գրկում:

Սինեակը լայնացաւ, սէրն իջաւ երկնքից. Բողարը, քարերը, ծիւնը, ծառերը, մինչեւ անգամ «Ընա», բոլորը, լուրը սիրելի էին այդ բոպէին երեք երջանիկների համար, և նրանք կարող էին սիրով լի սրտով՝ Մեծ-Խաչեցեալի յարութիւնը աօնել:

Տէր-Ակոփն արդէն ուշբի էր եկել, և այժմ ծնկի եկած իրա Սստծուն էր փառարանում, և նրանից ազատութիւն հայցում բոլոր վտանգուածների համար:

Հետևեալ օրը Բախչին նորից գնաց հիւանդանոց և
այնտեղից ուրախ-ուրախ վերադարձաւ:

—Այժմ բոլորպին առողջ եմ, —ասաց նա, զրասենեակ
մտնելով, —ահա բժշկից բերած առողջացման վկայականս
դէ, այսուհետեւ օրերս սաղսաղ կը գրէք:

Եւ նա գուրս եկաւ գործի:

Բայց մի երկու օր յետոյ նկատելի եղաւ, որ Բախչին
էլ առաջուանը չէ, կեղծաւոր և անբարեխիղճ է գարձել. շա-
րունակ գալիս ու զանգատում էին, որ նա փախչում է գոր-
ծից, ժամերով կորչում, թագ կենում, և երբ նկատողութիւն
են անում, սկսում է մրթմրթալ:

Մեքենայ Բախչին՝ անբարեխիղճ, քրմի պէս ծանրա-
դէմ Բախչին՝ կիղծաւոր... մի բան կար անշուշտ: Սկսեցի
հետամուտ լինել. և իսկապէս՝ նա փօխուել էր, նստում էր
մի որ և է մեծ անուի, կամ զիք զրած գործիքների կողքին
այնպիսի դիրքով, որ հեռուից իրեն նկատող չլինի, բայց
ինքը բոլորին տեսնէ: Եւ հէնց որ տեսնում էր, որ արդէն
եկել, մօտենում են իրեն, իսկոյն վեր էր թռչում և այս
կտմ այն երկաթը զրկում ու անքում, իրեն թէ աշխատում
է, պարապ նստած չէ եղել: Երկու շաբթու չափ նա շա-
րունակից իր այդ ձեփ լարախաղութիւնը՝ միշտ քծնող ժպիտն
ու շողոքորթող բառերը բերնին, մի բան, որ նրանում եր-
բէք չէր եղել նախ քան այդ. Նկատելի էր մանտւանդ, որ
մենակ մնալուց —աջ ոտից չուստը հանում էր, բերանը քաշ-
քշում, նորից հագնում:

Մի օր վերջապէս հանելուկը պարզուեց: Մի ծանր
գործիք պէտք է բարձրացնէին գեանից ու դնէին փայտերի
վրայ, որպէսզի չը փշանար. Բախչին քաջաբար ըռնեց մի
կողմից, բայց հէնց որ մի քիչ բարձրացրեց ու ծանրութիւ-
նըն զգալի գարձաւ, նա կարմրեց, տնքաց, «Ռւ ւ»... արաւ
և երկաթը բաց թողեց. միւս բանուորները չըկարողացան
պահել, և գործիքն ընկաւ գետին:

—Չեռքս լաւ չեի բռնացրել —արդարացաւ Բախչին, —
համ էլ նստիու էր, դուրս պրծաւ:

ՈՐՆ Է ՄԱՐԴԸ

Մեղ մի բանուոր ունէինք, անունը Բախչի, յաղթ կազմ-
ածք ունէր, և ըստ երկոյթին՝ ուժեղ: Ուրիշ առանձնայատ-
կութիւններով աչքի չեր ընկնում, բանուոր էր ու բանուոր:
Նա էլ միւսների նման առաւտները վեր էր կենում, գուրս
էր գալիս գործարանի բակը, և տրուած ցուցմունքներով՝
գործիքներն այստեղից այստեղ, այստեղից այստեղ քարշ
տալիս, մինչև որ երեկոյեան գործը վերջանում էր և նա
նաւթով ու կառով ձեռները մաքրելով՝ գնում էր իրեն բա-
ժին մնացած սեփական ժամերը տնօրինելու: Այդպէս նա
վեց ամիս էր անց կացրել, և ինքը մեքենայ գործած՝ այդ
ձեփի գործը նրա համար արդէն սովորական էր զարձել:

Բայց մի օր մի գժբախտութիւն պատահեց, որ մեծ
փոփոխութիւն մտցրեց նրա վորած կեանքի մէջ: Երեք հո-
գով երկաթ բարձրացնելուց՝ մի ծայրը բաց ընկաւ և զար-
կեց Բախչու աջ ոտի թաթին: Ոտը չփշրեց, բայց սաստիկ
ուսուաւ, կապտեց, այնպէս որ այլ ևս ոչ թէ աշխատել, այլ
թէկուզ ման զալ՝ անկարելի էր:

Գնաց հիւանդանոց. և այնուհետեւ մի ամիս շարունակ
նա գնում էր գալիս, մինչև որ վերջապէս՝ հասաւ «պալուչ-
կայի» օրը: Նա միւսների հետ կանգնած էր լուսամուտի առաջ.
և երբ իրան հերթը հասաւ ամսականն ստանալում մօտեցաւ
լուսամուտին, «կնիժկան» մեկնեց և ստացաւ 10 ըուբին
փող, ապա քիթը վեր քաշելով, ինքն-իրան ինչ որ խօսե-
լով՝ հեռացաւ. Երկի նեղացել էր, որ քսան ըուրլու փոխա-
րէն՝ 10-ն են տալիս, հիւանդ ժամանակուայ կէս-կէս օրէրը
դուրս գալով. կամ թէ հէնց իր ոտի վրայ էր բարկացել, որ
«յիմարութիւն էր ունեցել երկաթի տակ ընկնելու»:

Ասաց և նորից բռնեց երկաթի ծայրից՝ էլի անյաջող.
հարկաւոր եղաւ մարդ աւելացնել, մինչև որ գործիքը սրոշ
տած տեղը զրուեց:

— Էս ինչ ծանր է եղել էս անտէրը.—ասաց նա ինքնա-
խրեն, երբ զգաց, որ քննական աշխով իրեն հմ նայում, իսկ
երբ երես շուռ տուի, հեռացաւ բակի մի ծայրը, ուր չանչ
էր դրուած, և համոզուելով, որ էլ տեսնել չեմ կարող, չուս-
տը հանեց ոտից, ուրը շփեց և թիկնեց չանին:

Կէս ժամից յետոյ նա նորից երկաց:

— Բախչի, կանչեցի նրան:

Բախչին մօտ վագից. այսինքն՝ աշխատում էր ըստ
կարելոյն շուտափոլթ հանել, բայց չէր կարողանում, աւե-
լի ձեռներն էր արագ շարժում, քան թէ ոտները:

Երբ մօտեցաւ, կանչեցի վիրե, մի առանձին սենեակ
և նրան ասացի:

— Աջ ոտղ մերկացրու:

Բախչին... տարօրինակ բան, մի քայլ յետ գնաց, աշ-
քերը չսից և կէս-բարկացած, կէս յուզուած՝ մրմաց.

— Ուր մերկացրու... ի՞նչ ունես ոտիս հիտ:

— Քեզ առում եմ այս իսկ բոպէիս հանիր չուսող և
գուլպակ. —բառերը հատ-հատ շեշտելով՝ կանչեցի հո:

Վճռականութիւնու ու համայողական տօնու ազգեցին
հրամանների սովոր Բախչու վրայ և աջ ու ձախ նայեց,
ցանկացաւ կունալ, բայց նորից դքացաւ:

— Ախր... չը գիտեմ թէ... կակազեց նա:

— Զայնդ... նստիր ահա այստեղ, և հանիր:

Նա գութ շարժով դէմքով մօտեցաւ աթոռին, ծայրին
նստեց և ինչոր շարունակ քիթ տակ փափսալով՝ սկսեց
ոտը մերկացնել. և երբ վերջացրեց՝ ես զարհուրած, մի կողմ
ծռուեցի...

Մի ժամանակ, ըստ երկոյթին այնտեղ ոտ եղել էր.
իսկ այժմ... յամենայն գէպս նա ամենայն ինչ էր, բայց ոչ
ոտ. կաշին քերթուած ամբողջապէս, տիգ-տեղ թարախուտ,
բութ մատն առանց եղունգի, մի վէրքի զանգուած...

Քառսրդ ժամու չափ լեզուս բռնուած, ոչինչ չէի կարո-
ղանում ասել, և նոյն իսկ չէի կարողանում որոշել այն
դրութիւնը, որի մէջ ես էի գտնուած. չէի կարողանում պար-
զել այն վերաբերմունքը, որ ես պէտք է ցոյց տայի դէպի
այդ... մարդն ասեմ, թէ ողորմելին:

— Ճօ, քո զիսումդ իսկի խելք ըլկայ, —վերջապէս կան-
չեցի. ոտդ այդպէս է, և զու բանում ես:

— Հապա ի՞նչ անեմ, զլսիդ դուրբան, —մրմնջաց նա,
կարծիս ներողութիւն խնդրելով:

— Ինչպէս թէ՝ ի՞նչ անեմ. «օրդեր» վերցրու և գնա-
բժշկուիր:

— Մի անգամ էլ եմ բժշկուել... լազաթը տեսայ. —պա-
տասխանեց նա խորը թախծութեամբ:

— Ի՞նչպէս:

— Ի հարկէ: Մի ամիս բժշկուեցի, և կէս ամսուայ ոռ-
ձիկ միայն տուին: Ես էլ ասացի, —դէ որ այդպէս է բժշկուելն
աւելուրդ է:

— Ուրեմն զու դեռ բժշկութիւնդ չը վերջացրած ես
գործի կանգնել... բայց զու կատարեալ առողջացման թուղթ
բերիր բժշկից:

— Այս, բերի... զօռով...

— Ի՞նչ հս խօսում տակից զլսից. ի՞նչպէս թէ զօռով
— զարմացած հարցրի նրան:

— Կէս ամիս հիւանդանալուս համար որ չը տուին, ես
էլ քեասիր մարդ եմ, զնացի բժշկի մօտ, կրիւ-զալմաղալ սար-
քեցի, թէ՝ ոտս բոլորովին ասող է, թուղթը տուր. երբ տե-
սաւ, որ իրանից ձեռք չիմ քաշում, քննեց, դէս շուռ տուաւ,
դէն շուռ տուաւ, յետոյ թուղթը գրեց, ինձ տուաւ, միայն
պատուիրեց, որ մի առ ժամանակ թեթև գործեր կատարեմ:

— Իսկ ի՞նչու այդ մասին ինձ ոչինչ չիս ասել:

— Ուզում էի պրիկաշչեկին ասել, մէկ էլ շասեցի. վա-
խեցի զայ գանգատուի, որ բժշկին խարել եմ. ինձ համար
ամօթ էր.

Ես մտածութեան տակ ընկայ, ինչո՞ւ պէտք է այդ մարդը 10 մանէթի համար իր ոռը փշացնէր, աղքատութիւնն էր պատճառը, աշխատանք կատարելու բուն ցանկութիւննը, թէ մի այլ բան:

— Լաւ, ուզիղն ասու, տհանենք ինչպէ համար դու չես ցանկացել մի երկու շաբաթ էլ գնալ հիւանդանոց ու կարգին բժշկուել. չէ որ ստդ բեղ համար ոչ թէ տասը, այլ հաշորաւոր բուբիներ արժեն. կարծում եմ, դու ինքդ այդ շատ լաւ հասկանում ես:

Բախշին պատասխանի փոխարէն ինչո՞ւ կմկմաց, շուռ ու մուռ եկաւ, ապա ձեռքը դանդաղութեամբ դէպի ալիրի քսակից կարած բըռովը տարաւ և ծոցից մի թուղթ հանելով՝ մեկնեց գէպի ինձ:

Նամակ էր. բաց արի կեղառոտած թուղթն ու սկսեցի կարգալ.

«Սիրելի սրդի Բախշի.»

«Նախ եթէ կամենաս մերոյս կողմանէ հարցանել, փառք Աստուծոյ. սաղ և սալամաթ ենք. տացէ տէր-թաղաւորը որ դու էլ լինիս ողջ և առողջ և գործով աջողակ ի տէրն ամէն: Երկրորդը, սիրելի որդի, ահա որ իմանաս, քո գնաւըդ ութ ամիս է և ուղարկել ես մեզ քառասուն մանէթ փող, որից քսանը պարտք ու խարջ ենք տուել, մեզ մօտ մնացել է քսան մանէթ: Այժմ երկու ամիսն անց է կացել մի կօպէկ փող չես ուղարկել: Հարսիդ ոտները բորիկ են. զիսին շալի տեղ քո հին չուփիդ փէշն է զցում, այծն էլ դաբաղից ընկաւ ու ստակեց, մէկ-մէկ կթում էինք էլի և երեխի համար մածուն շինում, այժմ էղ էլ կտրուեց: Հիշմա չեմ իմանում ինչ անեմ. տանը մի բան չը կայ, որ ծափինք, ապրինք: Քեզ զուբրան, չասես՝ թէ մէրս շառ նամակ է զրում. մէրդ ջնանդամը գնայ քո հարսիդ ու երեխիդ գարդն եմ քաշում, որ ամեն նայելով՝ քթիս ծուխը մլում է: Հարեւաններումն էլ չը կայ, եթէ կայ էլ, չէ են ասում: Ուզում էի փողից մի քիչ պոկեմ ու կարաօֆէլ ցանեմ, բայց հարիւր տեղից ծակ ջիրումը փող կը մնայ: Վերջն

էլ ինչ երկարացնեմ. որտեղից որ է, մի քիչ փող ուղարկիր, գոնէ երեխին ամեն օր ցամաք հաց հասցնենք. ձեռքից գնում է:


Նամակի տակ էլի ինչ որ բաներ կային գրած, բայց չուզիցի կարգալ, հոգիս ճնշում՝ էք: Հայեացքս զցել էի Բախշու գէմքին, և... չէնց էսպէս նայում էի:

— Երբ այդ նամակն ստացայ և տեսայ, որ միայն կէս օքերս են տալու, քիչ մնաց սիրտս տրաքի, էլ դիմանալ չը կարողացայ: — Ակացից խօսել Բախշին, և ինչպէս դիմանայի, երկու ամիս այստեղ պարագ մնացի. վեց ամիս է, գործի եմ անցել և ստացիլ եմ 110 ը., 30-ը ես եմ կերել ու հագել, քասատոնը տուն եմ ուղարկել, մնացածն էլ էստեղ եմ մեր գիւղացիներին վաղուց պարտ եղել — տուել. ինչ հոգը տայի գլխիս, որ եարաւու ոտով կործի չը կանգնէի, ախր երեխիս հաց է հարկաւոր:

Բախշին գնաց, իսկ ես մտամոլոր նստած՝ յիշեցի վագուց կարգացած մի գրքոյկ, այնտեղ Բախշու պէս տանջուածի մէկը դրակց նայում է լուսոյ ճաճանչներով զարդարուած սենեակներին ու այնտեղ գուարճացողներին, և ինքն-իրեն հարցնում: — Ճիթէ նրանք մարդ են... եթէ նրանք մարդ են, հապա ես ինչ եմ... եթէ ես էլ եմ մարդ, հապա ինչո՞ւ նրանց նման չեմ...

Եւ աչքիս առաջ մերկանում են Բախշու թարախոտ ուները, քսակէ բլուզն ու կեղառա վիզը, և այնտեղ հեռու՝ տիրոջ փափուկ սաները, թանկանոց հագուստները, կարմիր զիզն ու կրկչան ձայնը, և տարակուսութեամբ՝ ինքս ինձ հարց եմ տալիս.

— Իսկապէս՝ սրանցից ո՞րն է մարդը:



«ՏԵՂԻՆ ԿԱՍԵՄ»

I.

Հէնց որ առաւօտը տեղից վեր էր կենում, Բալասն սկսում էր աչքերը չորս կողմը ման ածել, թէ չի գտնի արդեօք, մի այնպիսի բան, որ մի քիչ հայհոյէ, և երբ, նրա կոյր բախտից, ոչինչ չէր գտնւում, սիրտը հովացնելու համար՝ կնոջն էր հայհոյում:

Հայրել նրա համար ոչ թէ պատահական, ժամանակաւոր ցանկութիւն էր, այլ օրգանական, անյաղթելի պահանջ. նա աւելի շուտ հացի քաղցը կը տանէր, բան թէ հայհոյանքի:

Նա մի փոքրահասսակ, նիհար-նիհար մարդ էր, բերանը միշտ ծուծ, իրանը մի քիչ դէպի առաջ թեքած, դէմքի մի այնպիսի արտայայտութեամբ, որ ասես թէ ահա պատրաստում է դիմացը ելած քարը կամ ծառը կրծոտելու:

Իսքը վատում՝ բայց իրա լաշառութեամբ, իրա աներեսութեամբ՝ լացացնում էր ամբողջ Փ. գիւղը:

II.

Գիւղում խօսքի ուժ, պատճառաբանութիւններ, փառտերով հակառակորդին համոզելը, լուեցնելը՝ չկայ, այնտեղ պատճառաբանութիւնը բահի կոթն է, փառտը՝ կոմբալագը-լուխ դագանակը: Եւ որովհետև Բալասը շարաթուայ եօթն օրերում եօթանասուն ու եօթն անգամ հայհոյում էր գիւղացիներին, ուստի և Փ. գիւղացի մէկը չէր մնացել, որ նրա գլխին չփորձէր իր կոմբալագուխ, ծանրակշիռ փառտը:

Բայց ոչ մի ձար չէր լինում: Բալասն աւելի էր ոգեսորում, աւելի էր բանաստեղծական հայհոյանքների նորա-

նոր գիւտեր, անում: Գիւղական «պատճառաբանութիւնը» նրա գանգին տրաքելուց, կարծես լուսաւորւում էր ուղեղը: Շատ անգամ պատահում էր, որ գիւղացիներից մէկն ու մէկը համբերութիւնից գուրս գալով, Բալասին բռնում շպրտում էր ցեխի մէջ, չոքում կրծքին, ու... տնւը թէ կը, տաս. բայց երբ վերջացնելով համոզեցուցիչ առարկութիւնները, գիւղացին յոգնած, մի կողմ էր քաշում, Բալասը ցհիսաթաթախ բարձրանում էր տեղից, ծեծկուած մարմնին հաստատութիւն տալիս իր զանգաչող ոտներով, ու կանչում: — Հը, տեսար լինչ արի... քու էսպէսն ու էնպէսն... դէ հիմա զնա, իաբարը տար:

III.

Գիւղացիք տեսնելով, որ ոչինչ չի օգնում, որ փայտեղին փաստերն ու ներգործական որոշ բայերը միայն պարծանքի աւելորդ սպիներ հն գումարում Բալասի գլխին, զարմացան նրա կենսունակութեան վրայ, սկսեցին մտածել, որ զա Աստուածանից ուղարկուած մի պատիժ է իրսնց մեղքերի համար. անունը զրին Զալա-Բալաս *), բաւականցան դրանով. և այնուհետև ամենայն կերպ խուսափում էին Զալա-Բալասից. նրան տեսնելուց փախչում էին, մինչև անգամ չէին մօտենում, եթէ իրանց այգու ջուրը կտրում, ձորն ի վար էր դարձնում:

Զալա-Բալասը տեսաւ, որ բոլորին յաղթեց, ամբողջ գիւղը պապանձեցրեց, սկսեց լողալ իր փառքի մէջ: Ամօթ, խիղճ ասած բանը՝ չունէր ու չունէր, բայց այժմ աներեսութիւնը հասցըց ծայրահեղ չափերի:

Փողոցովը եթէ մի երեխայ էր անցնում, վրայ էր վազում, երեխին սրտածաք անում. կով, հորթ էր անցնում՝ քարով խփում, պոզն էր կոտրում, կամ ոտը վնասում. հաւ էր տեսնում, տիրոջն էր հայհոյում. և երբ յոգնում էր այդ

*) Զալան՝ կարծեմ ոսկորի տուբերկուլով է, որ գիւղացիք անբուժելի են հաշւում:

բոլորից, դուրս էր գալիս գիւղի դէմն, այնտեղից գիւղը թաղերի բաժանում, ու սկսում՝ թաղ-թաղ հայնոյիլ։ Մի խօսքով՝ այդ փոքրիկ մարզը, 150 ծուխ ունեցող գիւղը իրա բուռը հաւաքած՝ խեղացրել գառն էր շինել միմիացն իրա աշառութեամբ, իրա հայնոյանքներով։

I V.

Բայց անա ծնից այս-ինչ թիւը, որտեղից-որտեղ՝ փը չեց մի զովարար քամի, գիւղացիք կինդանացան, թեաւոր ւեցին, դուրս եկան նոր-նոր մարդիկ, որոնք սկսեցին կանչել, թէ չեն թողնի, որ Զալա-Բալաներն, իրանց գարշահոտութեամբ՝ այդ զովարար քամին ապականեն։

Կատաղեց Զալա-Բալասը, իրանը ծուծ, աչքերը պըլշած՝ դուրս եկաւ գիւղամէջ, ոտներն իրարից մի քիչ հեռու դրաւ, ձեռները կողքին սարքեց, ու սկսեց «Երդիլ»։ բայց առաջին խկ գալլալները խեղունցին նրա կոկորդում... նա օդի մէջ, մի դուցէ վերացական, բայց հզօր ուժի ներկայութիւնն զգաց, իրա գիմաց տեսաւ գէմքերի մի այլ արտայայտութիւն, ու... լոեց. սակայն չդիմացաւ. մի անգամ էլ բերանը բաց արաւ, որ «Երդէ», բայց նորից հայեցքը դէմ առաւ Մէֆիստօֆէլին կծկեցնող զօրութեանը, ձայնը զլղաց, զլղաց կոկորդում, ու դուրս չիկաւ։

Եւ կծկեց Զալա-Բալասը. կծկեց ու սկսեց կրծել իրան. առանց այն էլ նիհար էր. բայց վերջերին այնքան բարակեց, որ ասպան ծակով կարող էր անց կենալ.

Քաշուած մի անկիւն, նա յիշում էր իր փառաւոր անցիալն, ու հոգին տակն ու վրայ էր լինում. նա չէր կարողանում հաշտուել այն մտքի հետ, թէ ինքն էլ առաջուայթալասը չէ, և էլ չի կարող հոգեշահ հայնոյանքներով՝ գիւղացիների մեռածն ու ծնուածը, հինն ու նորն օրհնել նա տեսնում էր, թէ ինչպէս իրանց տան մօտով երեխաներն անցնում են վստահարար, ուրախուրախ ծիծաղելով, և մէկը չկար, որ նրանց սրտապատաւ անէր. նո տեսնում էր, թէ ինչպէս պոչը տնկած՝ հորթը ցատկուում է հրճուանքով,

և ինքը չի կարող նրա անիծած ոտներին մի հինգ գրուանքանոց քար կպցնել, և ուրիշ շատ տարօրինակ բաներ էր տեսնում Բալասը, և վախենալով, թէ իրեն կը լին, մըտքումն ամենաուժեղ հայնոյանքներ էր տալիս, երեակայական քարեր կպցնում թոշկոտող հորթի ոտներին ու շրթունքները կրծտում։

V.

Բայց... ամեն տանջանք վախճան ունի, վրայ հասան յաջորդ թուակաները, մողէսները դուրս սողացին զանազան ծակ ու ծուկերից, և Բալասը մի ճիչ արձակեց, ոտք բերկրանքի, անհուն ցնծութեան ճիչ էր, մի ճիչ որից համագիւղիների մագերը դիք—դիք կանգնեցին։

Զալա-Բալասը բռնեց իր նախկին դիրքը. բաց արաւ իր հայնոյանքների տոպրակն ու սկսեց այնտեղից առատօրէն բաժիններ հանել գիւղի մեծին ու փոքրին, սազին ու մեռածին։ Բայց զրանով զործը չվերջացաւ. նա նայեց չորս կողմը, տեսաւ, որ չէ... ուրիշ մեծագործութիւններ էլ են վիճակուած իրեն կատարելու. տեսաւ, որ ժամանակն ուրիշ բաներ էլ է պահանջում. բնութիւնը նրան օժտել էր զանազան «առարինութիւններով»։ ինչո՞ւ չօգտուել, ինչո՞ւ իրանչակին մի յարկ էլ չաւելացնել։

Եւ Զալա-Բալասը շարժուեց. այդմ նրա մի ոտը գիւղիւմն էր, միւս ոտը՝ քաղաքում. բարձրանում էր տան կըտուրն ու աչքը գիւղի ճանապարհին զցում, որ տեսնի իրանզած ձիաւորներից չեն երեսում, զնայ, «նորութիւններ» հաղորդելու; և երբ տեսնում էր, որ ոչինչ չի երեսում, մի հաց էր վերցնում, երկու բաժին անում, զնում զրպանն ու ձորն ի վեր, իրեն յայտնի լեռնուղիներով վազում դէպի քաղաք։

Դիւզը գողաց. գոհէ առաջները, հայնոյանքներ ուտեղուց յետոյ, Զալա-Բալասն իրաւոնք էր տալիս հանգիստ քնիլու. այժմ այդ էլ չկար. ձէն, ծպտուն կտրուել էր. զուվարար քամին անցել էր և Զալա-Բալասն էր գիւղի տէլը

ու տիրականը և մի քանի շներ, որ սպայն վախենում էին թալասի կողքով անցնելուց:

VI.

Ի՞նչ նոր գործ էր սկսել Զալա-Բալասը:

Եթէ գիւղացին մի քիչ զլուխը բարձրացրած էր գընում, Զալա-Բալասը դուռում էր:

Էյ, քո էսպէսն ու էսպէսը... ի՞նչ հս վիզդ տնկել. ի՞նչ հս ման գալի երկնքում... «տեղին» կասեմ, մէջքդ քառասուն տեղից կը ծալուի

Եթէ մի երեխայ վէր էր ընկնում, ու սկսում ողորմագին լոց լինել, Զալա-Բալասը վրայ էր համում.

—Մօրդ կաթն անիծեմ. ի՞նչ հս զում քուսակի պէս. ձայնդ կտրիր, թէ չէ տեղին կասեմ:


Իսկ եթէ մէկին սպառնում էր „տեղին ասելով“ և այս մէկը մի քիչ ուշ էր խոնարհում հրամանին, Զալա-Բալասը քաղաքի ճանապարհն էր բռնում:

Պէտք է խոստովանել սպայն, որ քաղաքում «տեղը» նրան մեծ պատիւներ չէր տալիս, և տասն չէ, մի քսան անգամ վզակոթը «շոյելով» նրան դուրս էին վոնդել, միերկու մարդասիրական աքացիներ էլ մէջքին դրօշմելով. բայց Զալա-Բալասն այդ ազդու պատիւներից աւելի էր ոգեսրում, յետ գառնում, և զիւզն էր համում թէ չէ՝ կանչում էր—շմն որդիներ, տեղին կասեմ:

Եւ այդ «տեղին կասեմն» այնպիսի անօրինակ, հոգեկան պահանջ դարձաւ նրա համար, որ քնած ժամանակն էլ էր «տեղին ասում», արթուն ժամանակն էլ. Հացը կտրելուց, եթէ թիքէն մի քիչ դժուար պոկ գար, «տեղին կասեմ»—ասում էր. քամի բարձրանար՝ կը սպառնար թէ՝ տեղին կասեմ. արել տաք լինէր, մատը թափ կը տար ու կը դուար, թէ՝ «տեղին պէտք է ասէ». Մի խօսքով՝ հաց էր ուտում՝ «տեղին ասելով». ջուր էր խմում՝ «տեղին ասելով»:

Այս մարդը մի անտանելի մղձաւանջի նման ծանրացած Փ. զիւղի կրծքին, երկար տարիներ ճնշեց նրան իր լաշառութեան ծանրութեան տակ: Գիւղացիք ցաւի մէջ ընկած, միշտ վախառորուած՝ հալումաշ եղան նրա «տեղին կասեմի» ձեռքից: Բայց ի՞նչ կարող էին անել. այժմ «կոմբալազլուս առարկութիւններն» էլ չէին կարող գործազրել... երկար մտածեցին, մտածեցին, վերջն անունը դրին «Տեղին կասեմ», ու լուցին:

Ճոխ, փառաւոր «հասարակական գործունէութիւնից յիշտոյ, մի օր մըսեց «Տեղին-կասեմ». մըսեց, ծանր հիւանդացաւ, ու մեռաւ: Բայց երբ շունչն արդէն բերանն էր հասել ու պատրաստում էր գուրս թուչելու, նա ջղաձգաբար հաւաքեց ուժերի մնացած բեկորները, աշքերը չոեց, ու վերջին անգամ՝ «ձեր հէրն անիծած, տեղին կասեմ»—մըրմընջաց ու բազմաշխատ ոտները ձգեց:



Ա Ի Ա Զ Ա Կ

ԱԽԱԶԱԿԸ

Գործս շտալողական էր. յետաձգել չէր կարելի. բայց ճանապարհը խիստ վտանգաւոր էր. հարևանիս առաջարկեցի ինձ հետ գնալ, նա համաձայնեց, բայց կինը կանգնեց, մարդուն նախատինք կարդաց, երեսարանք տուաւ, թէ երեխաներիդ մվա պէտք է պահի քեզնից յետով, -և նա մնաց:

Ուրիշ ճար չկար. վերցրի ամենալաւ հրացանս, ատր-
ճանակս, թուրս կապեցի, ու հստեղով ամբողջ գտառում
հոչակուած սև ձիս, երեսս խաչակնքեցի ու ճանապարհ
ընկար:

Սկզբում՝ ոչինչ. քանի որ ճանապարհս մարդաշատ տեղերով ու դաշտերով էր անցնում, ևս ինձ համար շվացնում ու պարսկական զանազան եղանակներ էին երգում. բայց քանի մօտենում էի անտառին, ձայնս ցածրացնում էի և ուշադիրութեամբ ամեն կողմ նայում, թէ կասկածելի բան չ' երևում, արդեօք:

Եւ իրաւունք էլ ունէ՞ այդպէս վարուելու. Մռաւի անտառներն այդ տարի ուրիշ տեսակ հաչակ էին վայելում. աւազակներն այն անգնդախոր ձորերում ու մութ անտառներում բուն դրած՝ սարսափ էին տարածել իրենց չորս կողմը. — սպանութիւնները հազուազիւտ չէին; իսկ թալաններն՝ ամեն օր: Այդ պատճառով՝ վերջին ժամանակները մարդու ոտ կտրուել էր այդ արիւնահոտ կողմերից, և շատ ստիպողական պայմաններն էին միայն, որ ինձ հարկադրեցին հէնց այդ վտանգաւոր ու երկար ճանապարհն ընտրելու: Ես յանձնուել էի բարի բախտիս, ուրիշ ինչպէս էլ

անել. ճիշտ է հրացանս ու թուրս հիմնալի էին, բայց այնքան բախտաւոր էի եղած, որ նրանց երթէք գեռ գործի զըրած չկայի, և հաղիւ թէ այժմ էլ, նեղն ընկած ժամանակը կարողանային ինձ մի որևէ ծառայութիւն անելին: Եթէ գոյն նէ նախօրօք տեսնէի աւազակներին ու մի քայլ, կամ ծառի յետե անցնէի, էլի կարող էի մի կերպ հօլա տանել պաշտպանուել. բայց եթէ յանկարծ դէմ ու դէմս ենէին... միակ յոյս ձիս էր,

Պէտք է ասել, որ հէնց այդ միջոցներում՝ շրջակայքը գլրդացնում էր և մի ուրիշ աւազակի անուն, որին «Զալաղան» անունն էին տալիս: Այս էր այդ Զալաղանը, որտեղացի էր, —ոչ ոք չէր տեսել, ոչ ոք չգիտէր, միայն բերանէ-բերան անցնելով՝ ասում էին, որ նա մի հակայտմարմին առաջարկ է, կատաղի դէմքով, ահագին բեղերով, ոսկեպատ պատեանով թուրք կապած՝ սոսկալի ուժի տէր, մի մարդ: Ասում էին նոյնպէս, որ նա մի ժամանակ մի հասարակ երկրագործ էր եղել, և ապրում էր իրա համար հանգիստ, անվրդով, առանց որևէ մէկի քէփին կպչելու, առանց որևէ մէկին վիշտ կամ տհաճութիւն պատճառելու: Բայց մինչև վերջը անխոսով կեանք անցկացնելն ամենքին չի վիճակուած, և ահա մի օր էլ նրա զլիին պայտում է ամենամեծ դժբախտ, ուռեթիւնն ու կեանքը խորտակում, և նա դառնում է աւագի:

Պատմում էին, որ նա առհասարակ աշխատաւոր, երկրագործ գիւղացիներին, նոյնիսկ փող ունեցողներին՝ երբէք ձեռք չի տալիս. մինչև անգամ պատահել են դէպէ քեր, որ փող էլ է տուել, եզներ առնելու. նա հաշիւ ունէր ուրիշների հետ. և երբ նրանց տեսնում էր, կայծակ էր դաւնում, ու մա՞ս տարածում. նոյնպէս էր վարում և սոզ վորական աւազակների հետ. նրանց չէր սպանում, բայց հաշլածում էր անգիտօքէն, և կողոպտում կատարելապէս:

Սյսպէս՝ այդ մարդու մասին հազարհազար բաներ էին պատմում, թէս զես մէկը չէր եղել, որ ասէր, թէ այս, ևս նրան տեսել եմ: ուստի այս պատմումը անհաջող է կարող լինել:

Որտեղ էր գործում այր Զալաղանը. — ով զիտէ, — նրա ձայնը մին Մուղանից էր գալիս, մինչ Զանդեզուրից, մինչ Մուաւի գօշերից: Անհայրենիք մարդ էր, և բոլոր սարերն ու անապատները նրա հայրենիքն էին: Արդ, եթէ այժմ էլ նա Մուաւում լինէր... հարուստ մարդ էի, ճեսու մեծ գուշ մար և ճրաշալի մի ձի... հագիւ թէ պրծնէիր...

Այդպիսի մռայլ մտքերով պաշարուածէի, երբ ճամբորդութեանս երկրորդ օրը Խաչնն անցած՝ Ցեխ-Չորի բերանը մտայ:

Զիուս ամեն մի քայլը, իւրաքանչիւր մի քար, որ գըշտուելով միւս քարին էր կպչում ու չըխկ-չըխկացնում, ինձ բարկացնում և ջղերս լարում էր, ախր ձայները կարող էին լսել... Այդ միջոցին կը ցանկանայի, որ տերեներն էլ չշարժուէին, և ձիու ոտները բամբակի վրայով անցնէին, կամ սոսկալի փոթորիկ բարձրանար, կարկուտ-անձրև տեղար. շնչաւորները ծակ ու ծուկերում պատսպարուէին և դուրսը միայն և միայն ես մնայի:

Ցեխ-Չորը գուրս գալու վրայ էի, մէկէլ առաջն նայեցի, տեսնեմ մի մարդ մի բող ձի նստած, ինձնից քան քայլ հեռաւորութեան վրայ գտնուող լեռնուղուց գուրս եկաւ, նայեց գէպի ինձ և կամաց-կամաց գէպի գետն ուղղուեց: Ես իսկոյն ձիուս սանձը քաշեցի ու լնազդմամբ՝ ձեռքս հրացանիս տարայ: Մի քանի վայրկեան այդ դրութեան մէջ մնալուց յիտոյ ինձ հաւաքեցի, ու սկսեցի մտածել, որ եթէ նա «վաս» մարդ էլ է, ապա դա նշանակութիւն չունի, քանի որ «նրանից» ուժեղ պէտք է լինեմ, ուրեմն ի զուր եմ ցոյց տալիս, որ վախենում եմ, և հետաքրքրութեամբ սկսեցի ես էլ գէպի գետն իջնել, քանի որ իմ ճանապարհս էլ այնտեղով պէտք է անցնէր: Երբ գետը հասայ, անծանօթն իջած՝ ձիուն ջուր էր տալիս:

Մօտկուց նրան զիտելով՝ ինքս-ինձ ժպտացի, որ այնքան վախեցի եմ, մի բարակ-բարակ, երկար մարդ էր, կարծ, կարծես, կրծոտած բեղերով, մի նոր ձեի հրացան ուսին, ու հասարակ պատեանով թուր՝ կողըն կախած:

— Բարի օր, — ասացի նրան:

— Աստծու բարին, — պատասխանեց նա, առանց երեսիս նայելու:

— Ամօթ չինի, որտեղ ես գնում:

Նա մտրակի կոթը մեկնեց դէպի Մուաւի հեռու կողմերը. ես, իհարկէ, չսասկացայ, թէ յատկապէս նա որտեղ էր գնում, բայց այդ երկիւղալի տեղերում ընկերով լինելը, անշուշտ, մեծ յարմարութիւն է բոլորի համար, և ես վրայ բերի.

— Բա, էդ խօ կարգին բան դառաւ. Ես էլ էն կողմերն եմ գնալու. միասին անցնելու բաւական տեղ ունինք:

Նոր ծանօթս ոչինչ չխօսեց:

Իմ ձիս էլ ջուր խմեց, և երկուսով գետն անցնելով՝ բուն Մուաւի պատուանդաները կոնսեցինք:

Ուղեկիցս առաջից էր գնում, իսկ ես՝ յետեկից: Նա իւր երկար ոտները կախ էր տուել նոյնպէս երկար ասպանդակների մէջ, զլուխը կախ զցել, և չիրուխը կծած, ձիու ամին մի քայլին օրօրւում էր աջ ու ձախ. կարծէս քնած էր. վաւասի նման ընկել էր թամբի վրայ, և իրեն յանձնել ձիու ընթացքին: Ես թէկ ուրախ էի, որ ընկեր ունիմ, բայց միւս կողմից էլ սկսեցի փոշմանել, թէ ինչու ընկերացայ: Մի բան պատահելուց՝ երկի մի բեռ էլ նա պէտք է դառնար ինձ համար... բայց և այնպէս, որքան էլ նա անպէտք լինէր, էլի բան էր. շուտով Զլդրանի մութ անտառները պէտք է մտնէինք, և ամենասանպէտք մարդուներկայութիւնըն էլ միիթարական էր. բացի այդ, թուում էր, որ նրա ձին տղամարդ ձի է, և հրացանն էլ, թէկ ոչ արծաթէ կապերով, բայց խօ կը տրաքէր...

Այդ վերջին մտքելն ինձ վրայ, զարմանալի բան, ուրախ տրամադրութիւն բերին, և ուղեկցիս հետ սկսեցի հանգներ անել:

— Խնամի, — գարձայ նրան, — Զալաղանին ճանաչում ես:

— Զէ, — պատասխանեց նա, չիրուխի կողով:

— Ափսոս, նրան ընկեր ես սազում... թէկ նրա վիզը

գոմէշի վզի հաստութիւն ունի, սակայն բարակ վիզդ էլ ձիւր՝ շատ ունի:

Խնամիս չխօսեց, իսկ ես ծիծաղեցի ու աւելացրի:
—Խնամի, որ աւազակներ զուրս գտն, ի՞նչ պէտք է
անես... չփախչես հա, չփախենաս, դու միայն մէջքս պա-
հիր... բայց, դու էն տաս, հրացանդ տրաքնւմ է,

Այդպէս «խնամուս» հիտ հանաք անելով, մի ժամու
չափ էլ անցանք, և Զլդրանի ամենածառախիտ տեղը մը-
տանք: Ուղեկցիս կանչեցի, որ մի քիչ կանգնէ, մեր չորս
կողմերը լաւ դիտենք, նոր միայն առաջ շարժուենք:

Հանգստութիւն էր տիրում. ոչ մի նշան չկար, թէ մեր
չորս կողմը կարող են չափ մարդիկ լինել բայց հէնց այդ
խողագութիւնն ինձ անհանգստացնում էր. նայում էի ու-
ղեկցիս, ու գտնում, որ նա երկիւղից խօսել չի կարողա-
նում. ուստի բարկացած՝ դարձայ նբան:

—Քո տունդ չքանդուի, տաենք ես մի ձի ունիմ, որ մի
անգամ կողքը խթելուց՝ Մոաւով կը թոշի. քեզ ինչ էր ե-
կել, որ էդ ժանգոտած հրացանով էս անտէր անտաներն
են լնկել ուր տմեն ծառի տակ տասը մարդու հոգի են
հանել...

—Աստուած մեծ է.—պատասխանեց ուզեկից: ու ձին
շարժեց,

—Աստուած մեծ է.—աւելի գրգռուեցի ես,—երբ գլուխդ
սոխի պէս փերցնենէն էս ժամանակն էլ կ'ասես թէ՝ Աստուած
մեծ է... ստներդ ծողերի նման ձիու կողքովն կախ ես ար-
ւել, գլուխդ էլ քամու տարածի նման՝ օրօրում ամեն մի
շարժումից... չփետեմ, թէ որտեղից պատահեցիր ինձ:

—Չես ուզում, դու մենակ գնա. —պատասխանեց նա
անտարբերութեամբ:

—Մենակ գնա... քեզ մենակ թողնեմ, որ սիրտ ճա-
քի էս անիծուած անտառում, յետոյ էլ ասես, թէ նամարդ
էր, թողեց, գնաց... քշիր, քշիր... —նեղացած վրայ պըծայ
ես, թէս, իսկապէս՝ ինքս մենակ մնալու տրամադրութիւն
չունէի:

Այդպէս սկսեցինք առաջ գնալ Խովին ուշագրութեամբ
ես ականջս, ձէնի էի պահում, որ մի որեէ վտանգ սպառնա-
ցող նշան տեսնելուց՝ կամ ձիս քշեմ, աղատուեմ, կամ թէ
պաշտպանուելու փորձեր անեմ. միենոյն ժամանակ բարկա-
ցած հայեացքներ էի զցում ուղիկցիս, որ, կարծես, աշխար-
հից բէյխարտը, ձիու սանձը համարեա բայց թողած՝ մէջքը
կոտրածի պէս օրօրում էր աջ ու ձախ: Այդ ըոպէին ինչ-
պէս կը ցանկանայի, որ մենք գոնէ Զալաղանի և ոչ ուրիշ-
ների ձեռքն ընկնէինք. ես հաստատ հաւատացած էի, որ
նա մեզ, ճիշտ է, անպայման կը թալանէր, բայց չէր ըս-
պանի:

Հասել էինք մի տեղի, ուր ճանապարհը մի քիչ լայ-
նանում էր, և մի շատ փոքրիկ հարթոց էր բացւում ան-
տառի սրառում. այդ այն տեղն էր, ուր մի քանի օր տաջ
հինգ մարդ էին թալանել, երկուսին էլ վիրաւորել: Մըտ-
քումս հազարաւոր սրբերի անուներն էի կանչում, երբ,
կարծիս թէ, մի փոքրիկ շվիզոց ականջիս հասաւ, և մի ծա-
նըր զողոց ուներիս ծայրից տարով գլխովս ելաւ: Ուղեկցից
էլ երեսում էր, որ մի բանի գլխի ընկաւ, որովհետեւ նա
չիրուէիր հանեց բերնից, զուխը քիչ թեքեց, ու նայեց զէ-
պի ծախ:

Հէնց այդ միջոցին, կարծես գետնի տակից, հինգ հո-
գի զինուած, կատաղի դէմքով՝ ցցուեցին առաջնիս:

—Իջէք ձիերից, —զոռացցին նրանք:

Ես սարսափահար՝ մնացի փէտացած, սառած, և չէի
իմանում, թէ ինչ անեմ. արգէն ամեն ինչ վերջացած և
մահս տառջս էի տեսնում: հրացանս էլ մոռացայ, թուրս էլ...

Յանկարծ... Աստուած իմ... այն ինչ տեսայ, ուզեկի-
ցը՝ պոչի վրայ ցցուած օձի նման ծառացաւ ասպանդակ-
ներում, աչքերից կայծակներ թուան և խունացած պատես-
նից մի շողշողուն թուր ցոլաց օղի մէջ.

—Հէյ գուք... Զալաղանին չէք ճանաչում. —մի ահեղ
ձայնով որոտաց նա, և Զլդրանի անտառները թնդացին այդ
մոնչոցից:

Ասես աւազակների գլխին երկինքը պայման... «Զալաղան» անունը նրանց զարկեց կայծակի թափով, նրանք յետ կրընկեցին սարսափից բռնուած, և միայն մէկը կարողացաւ բեկրեկուն ձայնով աղաչել.

— Զալաղան-բէկ, գլխիդ դուրսան, մեզ մի սպանիր... չենք իմացել:

— Հանեցէք ինչ որ ունիք. — Նորից որոսաց ուղեկիցս, որ հէնց ինքը Զալաղանն էր:

Աւազակները մերկացան. Զալաղանը փշրեց նրանց զէնքերը, մնացած իրեղէնները յետ տուաւ իրենց, իսկ փողերը վերցնելով ասաց, բառերը շեշտով:

— Կորէք և այսուհետեւ աշխատեցէք ինձ չհանդիպիլ... Իսկ այս փողերը կը ստանան նրանք, ովքեր տեսի կարօտ են և որ, ոչ թէ զէնքով, այլ խոփ ու գութանով են հաց ըստանում:

Երբ ճանապարհ ընկանք, Զալաղանն էլի ոտները կախ էր տուել, չիրուխը կծել, և օրօրւում էր ձիու շարժմանը համապատասխան. Նա բոլորովին հանգիստ էր, կարծես ոչինչ չէր պատահել, ոչ ոքի չէր տեսել: Իսկ ես... ամօթից կարմրած՝ նրա յետեց ճանապարհս էի անցնում, ու չէր համարձակւում նոյնիսկ, որ մօտենամ ու ներողութիւն խնդրիմ*):



*.) Այս պատմուածքը ես լսել եմ Վարանդայում, բայց ոչ պատմը ւածքիս հերսուց, թէկ գրուած է առաջին գէմքով. Սակայն թւում է, որ սրա նման մի բան պէտք է, որ մի տեղ կարգացած լինիմ. որտեղ՝ չգիտմէ: Թերեւս իմ լսածս վարիանան է մի սրեկ պատմութեան, որ զանազն տեղ պատմում են զանազան գունաւորութիւններով:

ԳԵՐԵԶՄԱՆԱՏԱՆԸ

Անտառազարդ սարալանջից իջնելով՝ առջեդ բացւում է մի տափարակ տեղ, կպած ահեղատես ժայռերին: Մի փոքրիկ, յստակ աղբիւր էլ կայ, որ ժայռերի տակից գուրս ցայտելով՝ տափարակին կրկնակի կեանք և գրաւչութիւն է տալիս:

Այդ տափարակում է տեղաւորուած Հնձող գիւղի գերեզմանոցը: Հին գերեզմանատուն է, զանազան ձևի ու տարիքի քարեր կան, տեսակ-տեսակ, անորոշ ու անձոռնի քարակոփ պատկերներով նախշած: Տեսարանն այդտեղ ընդհանրապէս գեղեցիկ է. բայց աւելի գիւրեկան է այն մասը, որտեղ գիւղի նահապետ՝ Պետրոս-Պապենց մեռեների նըշխարներն են ամփոփուած. այդ կտորն իրենով մի ճոխ, լաւ խնամուած պարտէզ է ներկայացնում, ուր պտղատու ծառերի և վարդի թփերի արանքներում, հինաւուրց գերդաստանի անդամներն են հանգստանում:

Պարտիզի արկելեան կողմում, նորատունկ կեռասեհու տակ՝ սրբատաշ մի հանգստաքար կայ, որի ներքեւի կողքին մի մարդ կայ կոփած, գաւազանը ձեռքին, միւս կողքին՝ մի կշիռ, երկու թաթերն էլ բեռնաւորուած ինչ-որ անյայտ բաներով, իսկ ճակատին՝ փորագրած է.

Այս է տապան հանգուցեալ Պետրոսի:
Ծնուած 1800 թուին, վախճանուած... թուին.
Ով կարդայ, ասէ Աստուած ողորմեսցի:

Ծնունդի տարին կայ, իսկ մահուանը՝ տեղը բաց է, որովհետեւ տէրը գեռ կենացնի է:

Եւ երբ ես իմ սիրած լիռնալանջերը պտտելուց յետոյ դէպի տափարակն էի իջնում, միշտ գալիս, այդ պարտիզումն էի հանգստանում, և շատ անգամ էր պատմուած, որ

Պետրոս-պապուն պատահում էի այդտեղ, իր ապագայ բնակարանում.

Այն օրն էլ հըս պարտէզը մտայ, նրան այդտեղ գտայ, բայց այս անգամ նստած էնց այն քարի պատուանդանի վրայ, որ օրով առաջ ինքն էր պատրաստել տուել իր համար:

Ես և այդ 110-ին մօտ ծերունին՝ վաղուցուայ ծանօթներ էինք. սա սիրում էր ինձ հետ խօսել. իսկ այդ օրը, կարծես թէ, նա մի առանձին տրամադրութիւն ունէր խօսելու: Եւ էնց ինձ տեսաւ, ծերուկ աչքերը ժպագրեց ու ասոց.

— Ես օր ես եմ վրէն նստել, էզուց էլ ինքն է ինձ վրայ նստելու:

Իրա գերեզմանաքարն էր ակնարկում:

Ապա իջաւ քարից և ինձ հետ քաշուեց գէպի ընկուղենին:
— Հէյ, աշխարհ, աշխարհ, —ինքն իրեն հառաչեց պապին, աւելացնելով. — խելքդ ի՞նչ է կտրում էս բաներից,

— Ի՞նչ բաներից, պապի, —դարձայ նրան, չը հասկանալով խնդիրն ինչու մն է:

— Այ, էն քարի տակ տղաս է, նրա կողքին՝ թոռս, միւս կողքին՝ ամօթը դէնը, —մեր անեցին, նրանից այն կողմը՝ հայրս է, ապա մայրս, և այլն, մի ամբողջ գերդաստան... գետնի տակ աւելի շատ են, քան թէ երեսին... դրա համար էի հարցնում, թէ խելքդ ի՞նչ է կտրում էս աշխարհից:

— Արժէ այդ մասին մտածել, ծնուել ենք, ոլէտք է ապրենք, և պէտք է մեռնենք, որովհետեւ մահը կայ:

— Հա, ի հարկէ, մահը կայ. էդ ես էլ գիտեմ: Բայց ասում եմ, ափը որ մահը կայ, էլ ծնուելն ինչացու է: Սա, ուղիղն ասած՝ իսկի մի բանի նման չէ... ծնուիր, չարչարուիր, լաւ արա, վատ արա, և մի օր էլ վէր ընկիր, ու... ուներդ մեկնիր: Էս բանը ես չեմ հասկանում: Գիր կարդացած ես. զրումն ի՞նչ կայ կրած. — ինչու ենք ապրում, ինչու ենք մեռնում:

Պապին կեանքի առեղծուածն էր ուզում լուծել, ի՞նչ կարէ էի պատասխանել եւ լաւ է, որ նա չը սպասեց պատասխանիս, ու աւելացրեց.

— Մահը վատ բան է... գիտեմ քանի տարեկան եմ. Արաս-Միրզան Շուշի արշակելուց՝ 16 տարեկան եմ եղել. այժմ՝ 110-ին մօտ եմ, 110 տարեկան... ահա ծերացել—չուրացել եմ, թոռներ ու ծուռներ ունիմ, լաւ ապրել, լաւ մեծացել եմ, յարգանք ու պատիւ եմ վայելել. հիմա ինձ ի՞նչ է մնում, — պառկել ու՝ «փառք քեզ, Աստուած» ասելով՝ մեռնել, բայց ես կը տայի ջուխտ-ջուխտ այգիներս, բոլոր լըծկան-կթաններս, հողերս ու ամբողջ կարողութիւնս, միայն թէ այս սպիտակ, ձիւնի պէս սպիտակ մազերիս մէջ մի հատ սև մաղ կարողանայի աւելացնել... մի հատ սև մաղ, հասկանում ես... Էն աշխարհ, աշխարհ... փառչ աշխարհ, յիմար աշխարհ...

Պապին հասաչեց, գլուխն օրօրեց ծանրօւէն, ու խոր մտածմունքի տակ ընկաւ. նրան գեռ այդպէս չէի տեսել: Նրա խորհրդածութիւններն ինձ էլ էին անցել ու մտազբառ՝ շուրջս փռուած գերեզմաններին էի նայում:

— Ասում են՝ աշխարհը հինգ օր է, հինգն էլ սև. — շարունակեց պապին, — սխալ է, չորս օրը կարմիր է, մէկը սև. և այդ սև օրը՝ միայն մեռնելու օրն է, երբ մարդը ոչնչանում է, մանում գետնի տակ որդերին, ճիճուռներին կերակուր գտնալու համար... մարդը՝ աշխարհի զարդը, ճիճուռների կերակուր... և ինչպէս շուտ հող է դառնում... Ունցեալ օրը տմբամբալով՝ էն լափ վերսի հին գերեզմանատունն էի գնացել. գերեզմանատան ներքեփ կողմը հեղեղակոխ եղել, փլեկը. ու շատ շատ ոսկորներ գուրս եկել թափուել, նրանցից մէկը գեռ փռ ընկած՝ պատումն էր մնացել. ձևսնափայտս մեկնեցի, որ տեսնեմ փամձ է, արդեքը. և մի քանի անգամ թխկթխացըրի. բայց մէկ էլ յետ քաշուեցի, կարծես ձեռներս այրեցին: Ո՞վ զիտէ, ում զլուխն էր... ջահէլ է եղել, թէ ծեր, քաջէ եղել, խանչալը կապած, թուսնգն ու սին... իսկ այժմ... յետ քաշուեցի, վախեցայ մտածելով, որ ահա մօտեցել է ժամանակը, և իմ ոսկորներս էլ այսպէս պէտք է գուրս ցցուին, որ ոսկորներիս էլ մի ժամանակ մէկը կը գայ, ու մահակով կը թխկ-թխկացնէ, իմանալու համար, թէ որ սպիտակնի է փառել...

Համլէտը՝ իօրիկի գանգը ձեռքին. այնտեղ Համլէտը՝ երիտասարդ, առոյգ, այստեղ պապին, —ծերացած, դարուց աել ապրած, սակայն երկուան էլ կեանքի առեղծուածի տակ ճնշուած, անկարող:

Դու գիրք կարգացած ես, իսկ ես՝ քո չորս չափ ապրած. շատ եմ տակ տուել գլուխ տուել և կարծում եմ, որ զրի մէջ էն չի լինի, ինչ որ իմ էս չորացած գլուխս է մտածել ու համկացել: Դիր... թնչ է գիրք, ինչու համար է նա, ինչու են գրում... յիմարութիւն, ուրիշ ոչինչ: Ախր մեռնելու ենք, ոչնչանալու ենք, զէ որ մեռնելու ենք, էլ ինչու համար ենք երկար ու բարակ մտածում, հերկում, ցանում, աշխարհ ման գալիս, կաշգում, մեծ մարդ դառնում... ինչու ենք ասում, թէ՝ այս ինչը լաւ մարդ է, այնինչը՝ վատ. այս ինչը հարուստ է, այն ինչը՝ աղքատ... որն է լաւը, կամ վատը. թիրն է հարուստը, կամ աղքատը: Դիցուք թէ, ինչպէս ասում են, ես շատ լաւ մարդ եմ, արար-աշխարհ էլ զարմացած է իմ լաւութիւնով. յետիյ... որ մեռնելուց յետոյ պէտք է ասեն, թէ՝ նա լաւ մարդ էր.— թնձ ինչ. թնդ իսկի չասեն. թնդ ասեն, որ ես շատ վատ մարդ էի, թնդ ոսկորներս վերցնեն ու դուրս շղբաւեն. դրանով ես թնչ պէտք է կորցնեմ, կամ թնչ պէտք է աւելացնեմ: էդ ոչինչ. րայց երբ մարդս հիւանդանում է, մէկ էլ տեսար իսկոյն միմեանցով անցան, սրբի տակ վազեցին, մատաղներ արին, բժիշկ բերել տուին, որ ինչ է՝ հիւանդին առողջացնեն... Տէ՛ր իմ Աստուած... ախր ինչու համար. նրա համար, որ առողջաւ նայ, և մի երկու տարի ապրելոց յետոյ, նորից հիւանդանայ ու մեռնի. զէ հապիր մեռնում էր, էլի՛, էլ առողջացնելող թիրն է... Ծիծաղ է, ծիծաղ... Բանը սա է, որ երբ մէկը տանջուելով, չարչարուելով է ապրում, երբ մէջքը պոկելով են, իւարջ ու բորջ առնում, էստիղից-էնտեղից զալմազալ են անում, թէ՝ կա լաւ բան չի, չի կարելի, և այն. այ ձեր տունը չքքանուի, որ չը տանջուի, չի մեռնելու, որ հարուստ լինի, չի մեռնելու. միենոյն չի, միերկ ու ակլոր պէտք է մեռնի, թէ խաս ու դումաշում փաթաթուած, ոսկէ թախտի վրայ. միենոյն է, և ի զուր նա մարզիկ արտանջում, թէ երեխայ չունեն, կամ աղքատ են, կամ մերկ են, ցրտից սառչում են. և իզուր են մարզիկ ուրախանում, թէ հարուստ են, երեխաներ ունին, հիւանդ չեն և զայմաղ ու կարագ են ուսում. երկուսին էլ միենոյն նողն է ծածկելու, երկուսին էլ միենոյն որդն է ուտելու. Բոլորը, բոլորը դադարկ բաներ

են. երկինքն էլ գետինքն էլ, աստղերն էլ, լուսինը, արեգակը, —բոլորն էլ գատարկ բաներ են, իսկ մարդիկ երբ որ ծնւում են, պէտք է հաշուեն, որ չեն ծնուել, որ արդէն մեռած են, և այսպէս, մեռածի պէս էլ մնան... Եռ իմ հօրս եմ թաղել, իմ որդին ինձ ել թաղի, որդուս որդին՝ իրա հօրը կը թաղի, և այսպէս անվերջ, անվերջ... էլ ինչու ենք ապրում...

Պապին լոեց, աչքը զցեց իրա համար պատրաստած քարին, նայեց, նայեց, ու դարձաւ ինձ.

— Հ՞ը, թնչ ես ասում. զիր կարգացած մարդ ես. խելքդ թնչ է կարում էս բանիրից:

Ես լուս էի. այդ մարդը գարուց աւել ապրելուց յետոյ, հերքում էլ կեանքը. ներքում էր այն ժամանակ, երբ արդէն մահուան շէմքումն էր գտնւում, երբ իրա համար արդէն պարզ էր, որ մօտ է արեմուտքը, որ մեռնում է. նա այդ գիտէր, զգում էր ու զառամած, կմախքացած ձեռներին նայելուց՝ զողում. իսկ ես... «Ես գիտէի, որ մահը կայ, բայց չը գիտէի, որ պիտի մեռնեմ». ես երիտասարդ էի, և դեռ ապրում էի. Բայց թնչ պատասխանէի, ասէի, որ այց պէս եղել է և այդպէս էլ լինի. ասէի, որ այս թնչ զգուին այսպէս է մտածում, իսկ այն միւսն՝ այնպէս, թնչ դուրս կը գար. զրանով լուծած կը լինէի կեանքի խորհուրդը... թնչ պատասխանէի:

Այդ միջոցին աչքս ընկաւ ուղիղ մեր գէմուդէմ գտնըւող մատաղ գեղձենուն, որ ծերունին ինքն էր իր ձեսքով տնկել մէկէլ տարին, իր թուան փոքրիկ գերեզմանսքարի զիխավերել. այդ պարտիզի ծառերի ամենամեծ մասն ալեւորն ինքն էր տնկել բուսցրել, և իր բուսցրած ծառերն աչքի լոյսի պէս էր պահում, խնամում. իսկ այդ գեղձենին դեռ երեկ էր ջրել ու նրա կանաչ, թարմ տերևները կպած ոստիկներին՝ փոքրիկ գերեզմանն էր հովանաւորում:

Ես տեղիցս բարձրացայ, քայլերով մօտեցայ գեղձենուն, և մինչդեռ ծերունին գէպի ինձ էր նայրւմ, բարձրացըրի ձեղքիս գտնուող փայտը, ու բոլոր ուժով զարկելով գեղձենու մի կողմի ոստերը փշրեցի:

Յանկարծ... ծերունին վեր թռաւ տեղից, որքան տարիքն էր թոյլ տալիս, կանգնեց ամբողջ հասակով, աչքերը նույց, և կանչեց յուղուած ձայնով.

— Գժուել ես, այ տղայ... գլխիդ ձի՞ է բացի տուել... էդ թնչ արիր:

Եւ, ըստ կարողութեան արագ-տրագ մօտենալով դեղձենուն, սիրտը խոցուած, վշտացած, ինքն իրեն բարկացած խօսկելով, սկսեց ինսամու ձեռներով բոյսի շիւղերը շարժել նրա իւրաքանչիւր տերեւը քրքրել, զննել, վէրքի չափը որոշ շելու և մի ճար անելու համար:

Այս մարդը, որ երկու լոտի առաջ, սրտի խորին դառնութեամբ կեանքն էր հերքում իր ամբողջ էութեամբ, իր բոլոր քաղցրութիւններով ու թափիծներով. այն մարդը, որ ծնուի կը՝ մեռնել է անւանում, որ ոչնչութիւն էր համարում մարդկային հոգու ամբողջ աշխարհը. նա, որ քիչ առաջ կանչում էր, թէ՝ իզուր են մարդիկ արտնջում, երբ մէջքը մարտկահար են անում! նա, որ վիլիսովիայօրէն առում էր, թէ՝ «բղորը, բոլորը գատարկ բաներ են», այժմ մի հասարակ գեղձենու սատիկների համար՝ իրեն ջարդում էր, ափ ու վախ անում և չէր կարողանում իրեն զսպել, չչը կարողանում ասել, թէ—ոչի՞նչ, բան չկայ. միենայն է, պէտք է երբեք չորանար, մեռնէր:

Եւ երբ այդ բանը նրան ասացի, նա զարմացած նաշ-
յեց ինձ, ճիւղերը բաց թողեց, գնաց, նստեց իր նախկին
տեղը, և մի խոր, խոր հառաջանք արձակեց, ապա գլուխը
թիւի մտածմունքների մէջ սուզուեց:

Ի՞նչ էր մտածում...

Այդ մասին նրան չը հարցուի:
Այս տարի ամառը՝ երբ գնացի Հնձող գիւղը և գերեզման
նատունն այցելեցի, Պետրոս-պատու գերեզմանաքարն արդէն
սարքած, պատուանդանի վրաւ էու ճակատին մռառասած:

Այս է տապահն հանգուցեալ Պետրոսի.

Ծնուած 1800 թուին, վաղմահուած 1908 թուին.

Ով կարդայ, ասէ Յատուած ողորմիսցի:

իսկ Պետրոս-պապու սիրած լնկուղենու տակ, այժմ իր որդին էր նստել, նոյնպէս ալեհեր, նոյն խորհրդածութիւններն անելիս, և քիչ հետու արդէն նրա պատրաստի գերեզմանաքարեն էր կանգնած, ծնունդի թիւը փորագրած՝ իսկ մահուանը՝ գեռ բաց:

ԾԱՏՈՒՐԻ ԵՐԱԶՄՆՔԸ

I.

Երկարակոթ թիւկը ձեռքին՝ Ծատուրը նաւթահանքի «Ժելօբներն» էր մաքրում: Հորերից մէկն այդ գիշեր շատ ցեխ էր տուիլ, այնպէս որ «Ժելօբները» կիսով չափ լքցուել էին աւագով, ու քիչ էր մնում, որ նաւթն ափերից գույս թափուէր:

Այս ոտը ատախտակէ նեղիկիկ «ժելօբի» մի ափին դրած,
ձախ ոտը՝ միւս ափին՝ Ծառուրը հմտութեամբ թիակի բե-
րանն էր առնում հաւթու ցեխն ու «ժելօբի» կողքովն ըն-
կած «կանաւիկ» միւս կողմբ շաբառում:

Նոյնպիսի վարպետութեամբ՝ Ակոփն էր միւս ծայրից
մաքրելով՝ դէպի Ծատուրը գալիս։ Գործն արագութեամբ
առաջ էր զնում երկու հակառակ կողմերից, և կէս ժամից
յետոյ, բանուուրները դէմ առ դէմ ելան. Նրանց միջի տա-
րածութիւնը մի սաֆէն էր միայն մնացել:

Ծատուրը թիակը դէմ տուաւ «Ժելօթին», ձեռները
նաւթոս լինելով ժեքով ճակատը սրբեց, նայեց ընկերոջն
ու ժպտաց: Ակոփն էլ նրան նայեց, ինքն էլ կանգ առաւ,
և տեսնելով, որ ընկերը ժպտում է, առանց իմանալու, թէ
ինչումն է բանը, ինքն էլ ժպտաց, բայց այնպիսի ձեռվ, որ
կարծես հարցնում էր.—իսկ լինի, ի՞նչ կայ:

—Արա, Ակոսի, գիտեմ մտքովս ի՞նչ անցաւ էս ըստէ-
իս,—խօսեց Ծառութը:

—Ի՞նչ անցաւ, —հարցրեց Ակոփը, դեռ միամտորէս ժպտալով՝ թիակը հորիզոնական ուղղութեամբ բռնած:

—Ասում եմ՝ էս «պեսօկը», ցեղը մաքրելու ժամանակ՝ բիրդան «լապատկիս» ուսովը մի հարիւրանոց ընկնի հա. —

—Հարիւրանոց... էդ ով պէտք է հարիւրանոցը զցի «պեսօկի» մէջ, որ քո «լապատկիդ» ուսովն ընկնի. —ծիծադից Ակոփը:

—Բահ... Էնպէս էլի. մտածում եմ: Ի՞նչ լաւ կը լինէր...
—Ի՞նչ կ'անէիր...

—Հըմմ... ինչ կ'անէիր... դու հարիւրանոցը զիր ձեռքիս, ես ասեմ, թէ ինչ կ'անէիր. —պատասխանեց Ծատուրն ու գէմքին հոգեկան հրճուանք փայլեցնելով աւելացրեց. —Էն խաչը, հէնց էգուց կը հեռանայի էս բարբադից. Աստը ծու տունը շէն կհնայ, պարտքս տուել, վերջացրել եմ... կը գնայի, առաջնիս գարուն է գալիս, մի ջուխտ լաւ եղ կառնէի, ու...

Այստեղ Ծատուրը փոխանակ խօսքերով յայտնելու, թէ ինչ կ'անէր եղների հետ, ուզեց շարժումներով ցոյց ատլ ալդ, որպէսզի աւելի՛ արտայատիչ լինէր: Նա թիակին մահի ուզգութիւն տուաւ, թեք կերպով սաղացրեց «ժելօրի» մէջ, ինքն էլ կսացաւ, երեւակայական խոփը հողում բլունացնելու համար, և «հծ-հծ» անելով՝ ձեռքը մեկնեց դէպի առաջ, իբրև թէ եղներին խրախուսելու:

Բայց մինչեռ նա ձեռքումը գտնուող անտեսանեի ճիպուսն էր դէպի եղները մեկնում, անզգոյշ շարժումից կորցրեց հաւասարակառութիւնը, և թէն դքացաւ, ու կոները տարածեց, մարմինի հաստատութիւն տալու, չյաջողուեց. շատ էր ծռուել. ոտը գուրս պղծաւ և Ծատուրը պոկուեց «ժելօրից». Նրա աջ ոտը մինչե ծունկը խրուեց կողքովն ընկած «կանաւի» հաւթոտ տղմի մէջ:

Ակոփը այդ անակընկալ դէպքից մի վայրկեան ապշացնեց, ապա իրան պահել չկարողանալով, սկսեց առորժակով, պինդ-պինդ ծիծաղել:

—Ես քեզ հազար անգամ տացի, թէ էդ անտէր եղները մի առնիր, զիմ են. —ծիծաղից հատառուող ձայնով հաշաք արաւ Ակոփը ու նորից քրքջաց:

Ծատուրը փնթինթալով ձիգ տուաւ, ոտը հանեց տըշ-մից ու ոտքի կանգնեց:

Գեղեցիկ երեակայութիւնը չքացել, իրականութիւնն էր մէջ տեղ... Ծատուրն այժմ եղների մասին չէր մտածում, այլ աջ ոտի մասին, որ ճիպում էր կեղտոտ նաւթիթանձրութեան մէջ, և քայլելուս՝ պը՛ժա-պը՛ժա թանձրտիզը կաթկթում էր չուստի երեսով: Բայց մինչե կէսօրուայ «սվիստոկը» ժամանակ շատ կար, իսկ գործը թողնել յետ դառնալ այդպիսի «գատարկ» բանի համար՝ չէր կարաղ. ով զիտէ, ինչ դուրս կը գար դրանից... վայ թէ ըշտրափ արին:

Եւ նա մի ոտը չոր, միւսը ճիպացնելով գործին կանգնեց, մինչե կէսօրուայ մի ժամ հանգիստ բերող սվիստոկը թնդաց «կաչեգարկի» կողմից:

II.

Որքան էլ Ծատուրի գործն այդ օրն անաջող, այնուամենայնիւ՝ նա իրիկունը զուարթագէմ էր: Նստած «կազարմացի» մի կողմում, ուրախսուրախ հանաքներ էր անում ընկերների, մանաւանդ՝ իրա հարեան Ակոփի հետ: Նա լաւ տրամադրութիւն ունէր, որովհետև այդ օրը «պալուչկա» էր եղել, և կէս ամսուայ ոսճիկը, —տաս մանէթ—թաշկինակի ծայրումը փաթաթած, պինդ կոճկած, ծոցաջիրումն էր զրել:

Ակնի, էս անտէր փողն ինչ լաւ բան է եղել. —ծորտուաւ Ծատուրը. —կողքս դաղում ա, դաղում:

Արա, Ծատուր, էսօր քեզ ինչ ա պատահել, հէնց փողից ես խօսում, —պատասխանեց Ակոփը. —չլինի՞ խաղէ-ին դառնալու միտք ունիս:

—Բա որ փողից չխօսեմ, ինչից խօսեմ. տուն-տեղ թողած՝ ինչու համար ենք էս նօթերումս չալիշմիշ զալիս: Ես էլ զու էլ էն մէկն էլ, —ամենքս փողի համար ենք եկել. փողն ամենքին է հարկաւոր. միայն էս կայ, որ մենք չարչարուում ենք հողմող առնելու, իսկ ուրիշները քէֆ ա-

նելու.—ասաց Ծատուրը, մի քիչ լսեց ու շարունակեց.
—եկող ամսի վիրջին քսան մանէթ նազդ վոր կունենամ.
Աստուած աջողայ, մինչև երեք ամիսը մի ջուխտ եղան գի-
նը կը դպացնեմ, էն վախտը կը տեսնես, թէ Ծատուրն ին-
չեր է անում, —երանի քեզ, բախտաւոր մարդ ես, սրտով խօսում
ես.—հառաչեց Ակոփը.—ես դեռ յիսուն մանէթ պարտք ու-
նեմ;

—Աստուած մեծ է:—սիրո տուաւ Ծատուրը.—ես էլ
հարիւրից աւելի պարաք ունէի, աշխատեցի, տուի: Դու
ջանսաղութիւն ասա, մին էլ մեր խաղէյիններին՝ խղձմը-
տանք... թէ չէ ամեն բան դպացնելը հեշտ է:

—Խաղէյիններին՝ խղձմանք..., գտնն կերպով ժպտաց
Ակոփը.—Նրանք հէնսա մարդը մի մկրատ ձեռքներին՝ չորս
կողմն են նայում, թէ ուռ ոռձիկից մի մանէթ խուզեն.
—Նրանք... Ակոփն ուզեց մի քանի բան էլ ասել, բայց
ինքն իրա ասելիքից վախեց ու լսեց:

—Եղնելը որ տոայ՝ պլծայ, —իւր երազների թելը
գտնելով՝ շարունակեց Ծատուրը, —վար կ'անեմ, մեր հողը
լու հող է. Աստուած կը տայ, հացը տանու կը դառնայ, և
միւս գարնանը...

«Կը պատկուեմ» խօսքը Ծատուրը չարտասանեց, ամօթ
համարեց: Նա լսեց և իրա ասածների ու անուրջների քաղ-
ցըր տպաւրութեան տակ պատկեց քնելու, և դեռ վերմակի
տակ, աչքերը փակած, ուրախ ժպիտը շրթունքներին, ա-
պագայ երջանկութեան մասին էր մտածում, իրա երեակա-
յութեան առաջ դեղեցիկ, կախարդական պատկերներ ստեղ-
ծելով:

III.

Ծատուրն առաւօտեան «սվիստոկին» արթնանալով
դեռ երեկոյեան սրտովի անցած հովերի տակ՝ ուրախ էր և
քէփը տեղը. Նա կայտառութեամբ վեր թռաւ, հագնուեց, և
հէնց ուզում էր դէպի «մաղան» ուզզուել, առաւօտեան մը-
թութեան մէջ մէկը կանչեց, առջան չ մօցման մրայ. Հիմ-
ու Փառ պատճենը ուր առյան բներու զան նաուզայուց

— մասի մի չ զա բժիժաց վայշահցած քառակ ոց ան-
օվ Ծատուրն էսթեղ է: — կատեղ եմ, Խոսրովամին, ինչ կայ, — ձայն տուաւ
Ծատուրը, զարմացած թէ ինչն Խոսրովամին, որ ուրիշ
հանքում էր ծառայում, էզպէս կանուխ իրան է հարցնում:
— երեկ գիւղից մարդ էր եկել, քեզ համար նամակ է
ըերել, ես էլ «վախտի» էի զնում, ասացի Ծատուրի կա-
զարման ճանապարհիս վրան է, մանեմ, տամ իրան. — ասաց
համազիւզացին, ու նամակը յանձնելով, ծռուեց՝ գուրս գը-
նալու համար:

— Բա էլ ինչ խարար են ըերել:

— Խաբար շատ կայ, բայց «վախտի» եմ. կ'ուշանամ,
թէ կարողացայ, իրիկունը կը գամ, կը խօսենք. — վերջա-
ցրեց Խոսրովամին ու հոռացաւ:

Ծատուրը տնից ստացած նամակից էլ աւելի ուրա-
խացած աշխուժութեամբ իջաւ ներքեի էպայսրման, որուել
գրագէտ Սահակն էր գտնւում, և նոյնպէս ուրբի ելած՝
պատրամտում էր «մաղան» դուրս գալու:

— Ա՛ Սահակ, քե մատազ, մի էս թուզթը կարգա. — խընդ-
րեց Ծատուրը, ձեռքի նամակը նրան մեկնելով:

Սահակը թուզթը մօտեցրեց էլէքտրական լամպի լոյ-
սին, ու սկսեց վանկ-վանկ կարգալ:

«Սիրելի որդի Ծատուր, առաջինը՝ շատ ու շատ բա-
րե կ'անենք քեզ ես և մայրդ, և Սօնան, և ազին և Միկիչը,
և Քոթէթը...

— Փոքր եղբայրս է. — ծիծաղեց Ծատուրը. — երկու տա-
րեկան է. հէնց ա, արջի քոթոթ լինի. անունը Սանթուր ա:

«...Եւ ամին, և բոլոր բարեկամներդ, — շարունակեց
Սահակը. — մենք սաղ սալամաթ ենք, որդի, քո առողջութիւնդ
ենք ուզում Տէր-Թագաւոր Աստուածանից: Երկրորդ, որդի,
որ իմանաս, էն անիծած Մուլուն տղան մեր Մեծ-Տափն
«սպօրնի» է արել, ասում ա՝ իմ ա, աղսախկալներին քաշել
ա իրա կողմը, մի քանի ստաքան արագ տուել, և մեր պա-
պական հողն ուզում ա ձեռներից խել, թէ ինչ ա՝ երկու
տարի եղներ չենք ունեցել, և ինքն ա վարել բահրով: Հի-

մա,քե մատաղ, հալլը-հալլաթ, որտեղից որ է, մի յիսուն-վաթսուն մանէթ փող ուզարկիր, որտեղ հարկաւոր է, խօ-սել եմ, տամ էստեղ, որ հինգ հարիւր մանէթանոց տափր ձեռքից չընկնի: Եթէ ուշացնես, իմացիր, որ հողը կ'առնեն մեզնից. աշխարհքումս սուլդն էլ, դիւանն էլ...

Ծատուրն. Էլ չիմացաւ, թէ նամակի շարունակութիւնն ինչ էր. լսածն էլ բաւական էր: Նա թախծոտ դէմքով՝ թուղթը վերցրեց, գանդաղութեամբ, անհաստատ մատնե-րով ծալեց, ծոցը գրաւ, ու մի քիչ մտածեց:

Նրա միտքն ընկաւ իւր քաղցր երազները, երեկուայ տրամադրութիւնը, եղները, վար ու ցանքսը...

— է՞ն, մարդուս դարդը մէկը, երկուսը պէտք է լինի... հառաչեց նա, ու գնաց դէպի բուրավոյները, ծանրացած քայլերով:

Նրա ցանկութիւնների իրագործման ժամանակն էլ տեղի էր հեռանում...



«ՄԱՍԼՈՆՉԻ» ՄԱՆԱՍԸ

I.

Թանձր զիշեր է: էլէքտրական լամպերը՝ հանքերի վրա տարածուած խոնաւ մառախուղի միջից հազիւ են կարողա-նում ազօտ լոյս սփոնկ իրանց շուրջը, և քիչ հեռութից՝ աւելի շուրջ օդի մէջ կախուած առկայծուող թոյլ կայծերի են նը-մանում, որ թուում է, թէ՝ ահա, ահա կը հանգչին:

Մի տեսակ խոր, ճնշիչ անձկութիւն պատճառող ծան-րութիւն կայ մթնոլորտում: Մառախուղի հետ գլկախառ-նուած նաւթային բուրգերի անկերպարան ծայրերը ձուլուած մթութեան հետ, առասպելական հրէշների տպաւորութիւն են թողնում, որ տեղն ու տեղը քարացած՝ դէպի չերևացող երկինքն են նայում:

Մարգկային ձայն չի լսում. բայց գրա փոխարէն՝ կարծես քարայրներից գուրս են թափուել գիշերաշրջիկ հըս-կայ գեեր և ըմբամարտութեան վայրի տնքոցներով՝ հան-քերը լըցրել: — Թրախկա-թրախկակ... ըրախկա-չըրախկակ... ֆը շտ-վը շտ... բազմատեսակ հնդիւնների մի դժոխային ժխոր, որ հանքերին տալիս է մթութեան մէջ գալարուող ու հեացող մի ճիւաղի կերպարանք:

Ժամը 12-ին քիչ է մնում: Հանրակացարաններում բանուորները շարէ-շար պառկած՝ անխոռվ քնած են. հան-գստանում են օրուայ աշխատանքից, և նրանց կրծքերի խա-ղաղ ելեկչները բոլորովին չեն համապատասխանում դրսի պատկերին: Նրանց մէջ նոյնիսկ ժամացողներ կան. երևի երազում մի լաւ բան տեսան: Հանգիստ, խաղաղ քուն...

Բայց, ահա, թանձր մթութեան ու խոնաւ մառախուղի խաւը պատոելով՝ մի ուժգին շվկոց զիւ ու բարձր, խեղ-

գելով հանքերում տիրող միւս ազմուկները, եկաւ, թափանցեց հանրակացարանն ու քնածների ականջներին զարկեց:—Հանքի սուլիչն էր դա, ժամանակն էր ազդարաբում:

«Վախտը» փոխում էր: «Կազմաման քնկոտ շարժման մէջ ընկաւ, արթնացած բանուորներն էին, որ պատրաստում էին հանքը ենիկու, իրանց յոդնաբեկ ընկերներին փոխարինելու:»

Արթնացաւ և «մասլօնչի» Մանասը:

Արթնացաւ, ձգուեց, ձգձգուեց, ձըռոաց, անքաց, ու տեղը նստելով՝ քնաթաթախ աչքերը դէպի լուսամուտը զարձրեց, որտեղից կարծես սուլիչի ուժեղ սուլոցն էր ներս խուժում:

—Չորս...—տրտնջաց Մանասը,—անտէր մնամ դու... բաց ա ընկել, զը՛ո հո զը՛ո, էլ ձէնը չի կտրելու... մէկ մինի, գնայ քարի տոկ դնէ, փշուր-փշուր անէ:—Մանասը մի քիչ լոեց, զուուը կախ զցից ու թեթև հասաչանքով աւելացրեց:—ախ, իսկի քու ձէնիցդ ազատուելու հմ թէ չէ... էն օրը մի մատաղ պիտի անեմ:

Ապա վեր կացաւ, ինքն էլ վրան բաշեց նաւթու շուրին ու միւս ընկերների հետ գուրս եկաւ հանքը:

III.

Մանասը «փոխեց» ընկերին, անցաւ «նոսոսխանան», իւղամանը լցրաւ իւղով և զուրու եկաւ «մագան»: Իւր գործը կատարելիս՝ նա քրմի լրջութիւն էր սուանում, այժմ էլ նոյնպիսի լուրջ դէմքով մտաւ «բուրավոյները», մաքրեց, իւղեց մեքենաները, պղնձի մասերին առանձնապէս մեծ ուշք դարձնելով թէ՛ չե՞ն տաքացել արդիօք. յետոյ նայեց «բէմենսիրը», մի խօսք սրա հետ թոցքեց, մի բան միւսին ասաց, և երբ ամբողջ երկու ժամ աշխատելուց յետոյ վերշին բուրավոյից ուղում էր գուրս գալ՝ մի ձայն ընկաւ աշկոնչով. երկի այդ ձայնից Մանասը խիստ տհածութիւն զգաց, որովհետեւ մի թունդ յիշոց գուրս եկաւ նրա բերանից:—Հանդիպակաց բուրավոյի վերնանիւն էր, որ բարակ

ձայնով տղզում էր, կարծես լաց էր լինում. «պագչիպնիկների» իւղը պակսել էր, «վալը» տաքացել. հարկաւոր էր իւղել: Մանասը ճակատը կնճուած՝ մի կտոր թոկով իւղամանը պնդացրեց գոտուն, մօտեցաւ բուրավոյին ու վերև նայեց, բայց ոչինչ չտեսաւ. խարխափելով գտաւ ըուրզի ամբողջ բարձրութեամբ, ուղղաձիգ, զրիթէ ուղղահայեց տնկուած վաթսուն աստիճան ունեցող սանդուղները, «Եա Աստուած» կանչեց, ու ոտը զրաւ առաջին աստիճանին:

Մառախուղն աւելի էր թանձրացի և խոնաւութիւնն ու ցուրտը զգալի գարձրել: Թէկ աստիճանները չէին երեւում, բայց և այնպէս Մանասը, թէկ զանգաղ՝ վեր ու վեր էր ենում, միայն շատ զգուշութիւնով: Ամեն անգամ ոտքը հաստատուն կերպով, լաւ պնդացնում էր, վերելի տստիճանափայտից երկու ձեռքով պինդ բանում, յետոյ միայն դէպի վեր շարժում: Այդ բովէին նրա ուղղով միայն մի բան էր թելապրում:—ոտքը պինդ դիր, փայտերը նութիստ, լզրծուն են, զգոյշյու... զգոյշյու, թէ չէ՝ հաշիւդ վերջացած է:

Վերջապէս Մանասը հաստ բուրդի գագաթը, որտեղ վերնանիւն էր պտտում կատաղի պայոյտներով՝ նաւթի բիւրտուր ցալքունները չորս կողմը ցրելով:

—Մաճճալ... տամներկու սամէն բարձրութիւնից մի քիչ ներքե թերուելով զուաց Մանասը և նրա ձայնը զողողալով օդի մէջ, հանգչեց մասսխուզում:

—Մաճճալ—նորից զուաց Մանասն, այս անգամ աւելի բարձր, աւելի զայրագին:

Բուրավոյի ներսն ամեն ինչ սառաւ, կանգնեց շոգեմեքենան, կանգնեց նաւթահան ճախտարակը, և նրանց համարակարիսը»: Մանասը մաքրեց «պատշիպնիկները», իւղով լրցրեց, մի քիչ ճարալ էլ «վալին» քսեց, և վատահ, որ «քեալլաչարիսը» այս անգամ ձէնը կը կարի, իւղամանը պնդացրեց գոտուն, մի քիչ թերուեց դէպի բուրզի ներսն, ու՝ նոյն միոծնից...—կանչեց:

Մեքենան հեաց և հախարակն ու վերնանիւը կրկին սկսեցին իրենց կատաղի պայոյտները, իսկ Մանասը առաջ

ւանից էլ աւելի զգուշութեամբ, խարխափելով, շօշափելով սկսեց աստիճան առ աստիճան իջնել դէպի ցած, և իւրաքանչիւր աստիճան ներքե իջնելուց՝ նա մի բան գտածի պէս էր լինում:

Ահա Մանասի ոտը կպաւ հողին. դրանով նա այնքան գոհացաւ, որ չնայելով երկքամեայ անդուլ աշխատանքին, չնայելով, որ «վերեռւմ» բաւական մըսել էր և յոզնած էր, այնուամենայնիւ մի թեթև ժպտաց, երբ պինդ հողն զգաց ուների տակ:

III.

Առաջին պատյառ վերջացրած՝ Մանասը կարող էր մի ժամու չափ հանգստանալ, Մտաւ «նասօսիսանան», իւղամանը մի կողմ դրաւ, ձեռքերը մաքրեց հաւթով ու կավահողով. յետոյ, նաւթի հոտը չքացնելու համար՝ լուսաց շողեջըրով և նստեց տախտակէ փոքրիկ նստարանի վրայ, լուկերին սպասելով, որ նա էլ գայ, մի քիչ հաց ուտեն:

«Նասօսիսանան» տաք էր. Մանասը՝ ջերմութիւնից տրամադրուած՝ մէջքը դէմ տուաւ նասօսին, նայեց զոնից դէպի զուրս, ուր ոչինչ չէր երկում, —յետոյ բրդոտ փափախը վերցրաւ գլխից առանց նպատակի, նորից տեղը դրաւ, վիզը յետ զցեց, ձեռները ծոծրակի յետից միացրեց իրար ու մեղմ ձայնով:

—Անանց բաշխանամ... մամուաց ու լսեց. ուզում էր երգել, բայց տեսաւ, որ իսկի երգելու իշտան չունի:

Այդ բոպէին ներս մտաւ իրանց գիւղացի Սիմօնը, որ իրա «վախտէնիկն» էր: Միասին էին զործի զուրս գալիս, միասին յետ գտանում, միասին ձաշում:

—Զայ էլ եմ բերել, —իւր արածի մեծութիւնն զգացողի ժպտով ասաց Սիմօնը:

—Պահ-պահ... արա, էղ ինչ լմւ ես արել, դէ ածի, ածի խմենք. — վրայ բերաւ Մանասը ու—նստարանը կարձ լինելով՝ նստեց այնպէս, ինչպէս ձիու վրայ են նստում, ոտները երկու կողմից կախ անելով, որպէսզի տեղ մնայ թէ ընկերոջը և թէ հացն ու չայր տեղաւորելու համար:

Սիմօնն էլ միւս կողմից հեծաւ հստարանին, և չայդանն ու մի խոշոր կտոր հաց դրաւ մէջտեր:

Նրանք մեծ ախորժակով իսմեցին մի-մի բաժակ թէյ, հացի պատառներն էլ նրա մէջ թրջելով: Թէյն այնպէս ուրախացրեց նրանց, որ սկսեցին նոյնիսկ հանաքներ անել չնայելով որ դրսից արձիճային ծանրութիւն էր զգացւում «նասօսիսանում»: Բայց երկրորդ բաժակը խմելուց՝ երբ Մանասը մի մեծ պատառ հաց թէյի մէջ թրջելով՝ բերանը դրաւ ու սկսեց ծամել, մի փոքրիկ միջնադէպ պատահեց:

Միջնադէպն այն էր, որ Մանասը հացը մի քիչ ծամեց, յետոյ ծնօտների փութկոտ շարժումը մէկէն դադարեցրեց, կենցրոնացաւ իրա մէջ, աչքը տնկեց մի կետի, կարծես մի բանի խիստ ուշագրութիւն գարձնելով, տպա արագութեամբ վեր թուաւ տեղից: մօտեցաւ դռանն ու՝ թիւն... արաւ դէպի զուրսը, բերնից զուրս թքելով հացի պատառը:

—Արա, էղ ինչ էր, կանչեց Սիմօնը:

—Զահը ութուածը նաւթուած էր.—դէմքը բթուած՝ պատասխանեց Մանասը, մօտեցաւ նստարանին. հացը վերցըրաւ, մօտեցըրեց քթին, հոտ քաշեց, բան չը գտաւ: Ապա կանգնեց նստարանի վրայ, հացի կտորը քաշեց նասօսից վերև կախուած լամպի առաջ, ինքն էլ վիզը ձգեց, հացն ու երեսը դէմ անելով լոյսին, դիտեց ամեն կողմից և, վերջապէս գտաւ, որ հացի մի կողմի վրայ նաւթ է երեռում: Պուկեց, դէն շպրտեց նաւթուած տեղն, իջաւ նստարանից, ու նախկին տեղը զրաւեց, սակայն այս անգամ հացը մի ուրիշ կողմ զնելով, որովհետեւ նկատեց, որ նաւթը տանիքի տախտակների արանքից է կաթում.

—Էս խարարիս հացն էլ ա նաւթուած, հացը.—զանգուտուեց Մանասը, թէյի բաժակն առաջ քաշելով:

—Արա Մանաս, տեսնես խաղէյինն ինչ ա ուտում—որտեղից որտեղ՝ հարցրեց Սիմօնը:

—Խաղէյինը:—նաւթուած հաց, —հեգնեց Մանասը.— խաղէյինն ինչ կուտի. գօլմա, փլաւ, ձուածեղ, —վրայ տը-

ւաւ Մանասն և ուզում էր «Ձիգեար» էլ տեկնացնել, սաւ-
կայն յիշեց, որ իրանք էլ մէկ-մէկ ուսում են «Ձիգեար»,
իսկ խաղէյինը խօմ «մասլօնչի» չէ:

— Մանաս, Մանաս,—դրսից թհուաց մի հրամայողա-
կան ձայն:

— Համմէ, համմէ,—պատասխանեց Մանասը, տեղից
պոկուց ու դուրս թռոււ դէպի ձայնը:

Գիշերուայ գործակատարն էր, պատուիրեց «նաւթերը
հաւաքել», իսկ ինքն անցաւ դէպի հանքի միւս կողմերը:
Մանասը բաց արաւ «վենտիները», նասոսին «խօդ» առաւ
ու սկսեց գիշերը քաջուած նաւթերը «խփել» հրկաթէ հոկա-
յական աւագանները:

IV.

Հանքի սուլիչը իւր որոտացող ձայնը տարածեց հե-
ռում ու հեռուն: Առաւահան ժամը 6-ը էր յայտարարում
նա, որպէսզի «վախտենիկները», դուրս գան գործի, իսկ
գործի վրայ զանուողները՝ վերադառնան իրանց սեպհական
ազատ ժամերը տնօրինելու:

Մանասը իւր վախտը վերջացրել էր, և այժմ ականջ
էր դնում սուլիչի երկար-երկար սուլոցին: ականջ էր դնում,
սակայն ոչ գիշերուայ անէծքներով ու թթմընջանքներավ:
Նրա գէմքին այս անգամ ինչ-որ հանգիստառութիւն կար:

Մառախուղն առաջուայ թանձրութիւնը չունէր, թէն
լոյսը չէր երևում, այսուամենայնիւ Մանասը, երկսը դար-
ձըրեց դէպի արևելք, բրդոտ փափախը վերցրաւ, դրաւ թի-
ւի տակ, ձեռքը մեկնեց մի քիչ դէպի առաջ ու կտնչեց
հանգիստ, մեղմ ու խնդրսկական ձայնով:

— Այ սուրբ երկինք, այ շապաթաթագ սուրբ առաւօտ.
դուք ինձ համբերութիւն տաք, դուք ինձ ջանսազութիւն
տաք, որ գործս տջաղակ լինի, կարողանամ պարտքս տալ,
և պարզերես, սաղ ձեռք ու ոտքով իմ ծնողներիս, իմ հար-
սիս երեսը դուրս գալ... Այ սուրբ առաւօտ, ինդիրը քեզ
համի:

Ազօթեց Մանասը, փափաղը զլիին դրաւ և առոյգ
քայլերով ուղղուեց դէպի «կազարման»:



200

«Ազգային գրադարան»



NL0124026

21428

